

ՕՐԸ ՕՐԻՆ

Յամեցող  
Դառնութիւն

էջ 2

ԿԼԵՆՏԷՅԼ-ՉԼԵՆՊԵԼ

Համազգայինը  
Կը Ներկայացնէ Վաիտ  
Ասատուրեանի «Ծաղկամանի  
Գաղտնիքը»

էջ 6

ԿԼԵՆՏԷՅԼԻ

ԵՒ ՊԸՐՊԵՆՔԻ

ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՆ ՄԷՋ  
ԹԵՐԹԸ ԱՅՍՕՐ ԱՆՎՃԱՐ Է


ASBAREZ ARMENIAN DAILY NEWSPAPER  
**ԱՄԿԱՐԿ**  
Օրաթերթ

Հին ԳՇԱԲԹԻ, Սեպտեմբեր 1, 2016, 108րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 15,321

THURSDAY, SEPTEMBER 1, 2016, VOLUME 108, NO. 15321 ■ 50 Cents



«Սուրբ Ներսէս Շնորհալի» Շփանշանը՝  
Իրաւարան էտվին Մինասեանին



2016ի ՀԵՒ Ամառնային Համբարը՝  
Ամենայաջողը Իր Պատմութեան Մէջ



«Արմինիըն Արթս»ի Բացումը՝  
Արվին Քոչարեանի Ցուցահանդէսով



«3 Շարաթ Երեւանում» Ֆիլմին  
Բացումը Սեպտեմբեր 14ին



ԿԼԵՆՏԷՅԼԻ ՅԱՆԵԼՈՒԱԾ



«Թեւանիկ»ը՝ Կլենտէյլի Փառատօնի  
Մրցութեային Ծրագիրին Մէջ

ԳԼԽԱՒՈՐ ԼՈՒՐԵՐ

ՕՐԸ ՕՐԻՆ

Յամեցող Դառնութիւն

ԱԲՕ ՊՈՂԻԿԵԱՆ

Վաղը Արցախի անկախ հանրապետութեան 25րդ տարեդարձն է...

Ապրիլեան քառօրեայ պատերազմէն ետք կարելի է տօնական մթնոլորտ ստեղծել...

Ամէնէն կարելորը՝ Արցախի ժողովուրդը կրնա՞յ ապահով զգալ իր հողին վրայ:

Վերջին շրջանին պետական տարբեր պաշտօնեաներ, նոյնիսկ ընդդիմադիր գործիչներ կը պնդեն...

Կ'ողջունենք այս յանձնառութիւնը, եւ կը յուսանք, որ բանակի միջոցները խժոճած դաւանանութեան խարանդին արժանի պաշտօնեաներ չկան...

Այս վստահութիւնը ներշնչելով՝ թերեւս կարելի ըլլայ թեթեւցնել մթնոլորտը ու յորելեանական տրամադրութիւն ստեղծել...

Եկե՛ք փորձենք յաղթահարել մեր հոգիներուն մէջ տակաւին յամեցող դառնութիւնը, յուսախարութիւնը...

Իրականութեան մէջ, ուրիշ մտաւ ալ չունինք, եթէ չենք ուզեր կորսնցնել այնքան զոհաբերութեամբ ձեռք բերուածը:



Փութին էրտողանին 7 Պայման Առաջադրած է, Մէկը՝ Արցախին Առնչուող

ԵՐԵՒԱՆ, «էրմենիհապեր».- Թրքական «Միւճէ» թերթի սինակագիր ճան Աթաքը Օզոստոս 31ին հրատարակած իր յօդուածին մէջ անդրադարձած է Ռուսիոյ մէջ վերջերս տեղի ունեցած Փութին-էրտողան հանդիպման՝ ներկայացնելով ուշագրաւ մանրամասնութիւններ:

Միւսակագիրը կը գրէ, որ Ռուսիոյ նախագահը Թուրքիոյ նախագահին առաջադրած է 7 կարելոր նախապայմաններ, որոնց լուծման պարագային երկկողմանի յարաբերութիւնները վերջնականապէս պիտի կարգաւորուին:

Նապէս պիտի կարգաւորուին: Ըստ Աթաքըի՝ առաջարկները հետեւեալներն են.

1. Սուրիոյ նկատմամբ ձեռք բերուած քաղաքականութիւնը ի սկզբանէ սխալ ընթացած է: Մենք Ասատը կը պաշտպանենք, դուք ալ ձեր յամառութենէն հրաժարեցէք եւ ճանչցէք Ասատին օրինականութիւնը:

2. Ղարաբաղը մեզի համար շատ կարելոր է: Գիտենք նաեւ, որ ձեզի համար ալ՝ Ատրպէյճանի պատճառով կարելոր է, սակայն (Շար. 18րդ էջ)

Արցախի Հարցին Մէջ ԵԱՀԿի Դերը Այժմ Աւելի Կարելոր է. Շթայնմայեր

ԵՐԵՒԱՆ, «Նիուզ».- ԵԱՀԿի անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու ո՛չ պաշտօնական խորհուրդը հանդիպում պիտի ունենայ Սեպտեմբեր 1ին, Փոթստամի մէջ: Օզոստոս 31ին, հանդիպման կազմակերպիչ՝ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Ֆրանք Վալթեր Շթայնմայեր յայտարարեց, թէ կը նախատեսուի, որ օրակարգի բոլոր հիմնական հարցերը քննարկուին այս հանդիպման ընթացքին:

«Ճգնաժամներով լեցուն աշխարհի մէջ ԵԱՀԿի դերը ներկայիս շատ աւելի կարելոր է, քան երբեւէ. անհկա կը վերաբերի ճգնաժամային կառավարման՝ Ուքրանիոյ արեւելքը, Մերձդնեսթրի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ, ինչպէս նաեւ այլ հակամարտութիւններու պարագային», ըսաւ գերմանացի նախարարը՝ ըստ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան:



Միւսկի Խմբակի Համանախագահները Սեպտեմբեր 8ին Մոսկուա Պիտի Այցելեն

ԵՐԵՒԱՆ, «Ազատութիւն».- Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա Օզոստոս 31ին յայտարարեց, որ ԵԱՀԿ Միւսկի խմբակի համանախագահները Սեպտեմբեր 8ին Մոսկուա պիտի ժամանեն:

«Մոսկուայի մէջ նախատեսուած են Միւսկի խմբակի համանախագահներու խորհրդակցութիւններ՝ Ռուսիան ներկայացնող իկոր Փոփովի մասնակցութեամբ: Համանախագահները նաեւ պիտի հանդիպին Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան ղեկավարութեան հետ: Պիտի քննարկուին Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգաւորման վերաբերող հրատապ հարցեր: Յատուկ ուշադրութիւն պիտի յատկացուի Մայիս 16ին Վիեննայի մէջ, իսկ Յուլի 20ին՝ Ս. Փետրասպուրի մէջ կայացած գագաթնաժողովներուն գոյացած համաձայնութիւններուն իրագործման ընթացքին», ըսած է Զախարովա՝ ըստ ատրպէյճանական «էյ.Փի.էյ.» լրատու գործակալութեան:



«Այդ հանդիպումներուն հիմնական նպատակը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հարցով երեք երկիրներու ջանքերուն համակարգումն է», եզրակացուցած է Զախարովա:

ASBAREZ logo and contact information including address, phone numbers, and website.

ASBAREZ logo and detailed subscription rates for different regions and advertising prices.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

# Ամերիկացի Նախկին Դեսպանին Պնդումները՝ Թուրքիոյ Պետական Հարուածին Կապակցութեամբ

ՊՈԼԻՍ, «Մարմարա».- Եմէնի մօտ Ամերիկայի նախկին աւագ դեսպան Արթըր Հուկս, որ Ֆեթհուլլահ Կիւլենը թուրքիա վերադարձնելու հարցին մէջ Կիւլենի դէմ փաստեր կը փնտռէ, ցնցիչ պնդումներ առաջ քաշած է Կիւլենի գաղտնի յարաբերութիւններուն մասին: Արդարեւ, Հուկս պնդած է, որ Կիւլեն շատ մօտիկ յարաբերութիւններ ունեցած է Ամերիկայի գաղտնի գործակալութեանց, ինչպէս նաեւ՝ Յունաց պատրիարքարանին հետ. Հուկս նոյնիսկ ըսած է, որ Յուլիս 15ի պետական հարուածը Ամերիկայի գաղտնի գործակալութեան՝ «Մի.Այ.էյ.»ի, Կիւլենի եւ Յունաց պատրիարքարանին կողմէ իրականացուած է: Հուկսի համաձայն՝ պետական հարուածի փորձին զրգապատճառներէն մէկն էր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ վերահաստատուած բարեկամական միջոցառումը: Ան կը պնդէ, որ Յու-

նաց պատրիարքարանի հոգեւորական Ալեքսանտր Քարլոսթոս, ամերիկացի դիւանագէտներ Կրեհեմ Ֆուլլըր եւ Ճորճ Ֆիտաս, 1999ին Կիւլենի Ամերիկա փախուստը կազմակերպած են:

Այս նիւթերուն մասին Օգոստոս 30ին թրքական «Ա. Քանալ» կայանէն կատարուած հաղորդումին ընթացքին Հայոց պատրիարքարանին անունն ալ յիշուեցաւ, երբ հաղորդավար Ալփեր Թան ըսաւ. «Արդէն իսկ չկայ մէկը, որ չի գիտեր, թէ Ֆեթհուլլահ Կիւլեն մօտիկ յարաբերութիւններ ունի Յունաց պատրիարքարանին, նոյնիսկ՝ Հայոց պատրիարքարանին հետ: Ասիկա այսքանով ալ սահմանափակուած չէ. Կիւլեն շատ մօտիկ յարաբերութիւններ ունի նաեւ Վատիկանի հետ: Մենք հոս քանիցս ըսինք, թէ Հոռոմի պապը Թուրքիոյ եւ այլ երկիրներու մէջ աւետարանչական պարտականութիւնը յանձնած է Կիւլենին»:

## Թուրքիոյ Մէջ Կրօնական Ազատութեան Վիճակը Կը Քննադատուի

ՈՒԱՇԻՆԿԻՎՈՐՆ.- «Ամերիկայի Ձայն»ը կը հաղորդէ, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը հրապարակած՝ «Կրօնական Ազատութիւններու Տեղեկագիր»ին մէջ քննադատութիւններ կան Թուրքիոյ հասցէին: Տեղեկագիրը դիտել կու տայ, որ զանազան կրօնքներու դէմ անիրաւութիւններ կը գործադրուին. օրինակ, ալաուիներու կրօնական հաւաքավայրերը չեն ընդունուիր որպէս աղօթատեղի, ու անոնց երեխաները կը շարունակեն ենթարկուիլ իսլամ կրօնքի դաստիարակութեանց: Թուրքիա նաեւ չ'արտօսներ, որ կրօնական փոքրամասնութիւնները իրենց հոգեւորականները երկրին մէջ պատրաստեն: Նաեւ, մինչ սիւննիներու մզկիթներուն առատ յատկացումներ կը կատարուին, միւս կրօնքներու աղօթատեղիները սեղմումներու տակ կը պահուին:

Տեղեկագիրին մէջ դիտել կը տրուի, որ տակաւին չէ բացուած Հէյպելիի Յունաց դպրեւանքը, իսկ պետութիւնը կը մերժէ ճանչնալ նաեւ յոյներու պատրիարքին «էքումենիք» տիտղոսը: Կը քննադատուի նաեւ այն իրողութիւնը, որ զանազան համալսարաններու եւ հաստատութիւններու մօտ կը բացուին իսլամ աղօթատեղիներ:

## Մոսկուա եւ Ուաշինկթըն Կը Ծրագրեն Համակարգուած Հարուածներ Հասցնել Հալէպի Մէջ

ՄՈՍԿՈՒԱ.- Ժընեւէն աղբիւր մը ռուսական «Ինթըրֆաքս» լրատու գործակալութեան յայտնած է, որ Մոսկուա եւ Ուաշինկթըն Սուրիոյ կացութեան կարգաւորման բանակցութիւններուն մէջ կ'ուսումնասիրեն Սեպտեմբերի կիսուն Հալէպի մէջ միացեալ գործողութիւն մը կատարելու կարելիութիւնը:

Ռուս-ամերիկեան խորհրդակցութիւններուն քաջածանօթ աղբիւրը ըսած է. «Այդ պահուն քաղաքին մէջ եւ անոր շրջակայքը պէտք է մնացած ըլլան միայն այն զինեալները, որոնք չեն ուզած վար դնել զէնքերը եւ դուրս գալ Հալէպէն: Քաղաքին մէջ մնացած զինեալները պիտի չըջափակուին եւ ենթակայ պիտի ըլլան ոչնչացման», ընդգծած է աղբիւրը՝ չճշգրտելով սակայն, թէ Սուրիոյ օդուծը եւս պիտի մասնակցի՞ այդ գործողութիւններուն:



## Ուաշինկթըն եւ Ֆրանսա Թուրքիոյ եւ Բիւրսերուն Կոչ Կ'ընեն Դադրեցնելու Սուրիոյ Մէջ Բախումները

ՄՈՍԿՈՒԱ.- «ՌԻԱ Նովոսթի» կը հաղորդէ, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ճան Քըրպի յայտնած է, որ Ուաշինկթըն Թուրքիոյ եւ սուրիացի քիւրտ զինեալներուն կոչ ըրած է դադրեցնելու իրենց բախումները, եւ պայքարը կեդրոնացնելու «Իսլամական պետութիւն» ահաբեկչական կազմակերպութեան վրայ:

Քըրպի ընդգծած է նաեւ, որ Թուրքիա կը շարունակէ մնալ Միացեալ Նահանգներու դաշնակիցը, սակայն շեշտած է, որ իր երկիրը «Իսլամական պետութեան» դէմ պայքարին մէջ կ'աջակցի նաեւ քրտական ղեկավարութեամբ Սուրիոյ ժողովրդավարական ուժերուն:

Նոյնանման կոչ մը ուղղեց նաեւ ամերիկեան բանակի կեդրոնական հրամանատարութեան սպայակոյտի պետ զօր. Ճոզէֆ Վոթըլը:

Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Հոլանտ իր կարգին եւս քննադատեց Սուրիոյ մէջ Թուրքիոյ զինուորական միջամտութիւնը՝ նշելով, որ «բազմաթիւ եւ հակասական» միջամտութիւնները իրենց մէջ կը պարունակեն սուրիական տազնապարտ աւելիով

հրահրելու վտանգը: Հոլանտ կոչ ուղղեց կողմերուն, որ վերջ տան բախումներուն եւ Սուրիոյ մէջ բանակցութիւններու սկսին: Ան յայտնեց, որ թրքական եւ ռուսական ուժերուն կողմէ Սուրիոյ հողերուն վրայ իրականացուող գործողութիւնները կրնան բախումները սաստկացնել:

«Թուրքիոյ կողմէ «Իսլամական պետութեան» վրայ յարձակումները հասկնալի են, սակայն Անգարա «Իսլամական պետութեան» դէմ պատերազմող քրտական ուժերն ալ թիրախ ընտրած է», ըսաւ Հոլանտ:

Նշենք, որ Միացեալ Նահանգներու նախագահ խորհրդակցական Պեն Ռոտտը նախապէս յայտարարած էր. «Մենք չենք աջակցիր եւ պիտի չպաշտպանենք թրքական զինեալ ուժերուն շարժումը Սուրիոյ հիւսիսային շրջաններուն մէջ, ինչպէս նաեւ Թուրքիոյ գործունէութիւնը՝ Սուրիոյ ժողովրդավարական ուժերուն դէմ, որոնց պաշտպան կը կանգնի Միացեալ Նահանգները»:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար էշթըն Քարթըր իր կարգին նշած է, որ Ուաշինկթըն կը պաշտպանէ Թուրքիոյ գործողութիւնները՝ ճարտապիտի հիւսիսէն մինչեւ իր սահմանը, ինչպէս նաեւ ճարտապիտէն արեւմուտք, սակայն՝ ոչ դէպի հարաւ: Քարթըր ընդգծած է, որ յառաջիկայ շաբաթ մտադիր է հանդիպում մը ունենալ Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Ֆիքրի Էշըքի հետ:

## Քանի Մը Տոդով

«Իսլամական պետութեան» լրատուական կայքը հաղորդեց, թէ Հալէպի մէջ սպաննուած է այդ ահաբեկչական կազմակերպութեան բանբեր Ապու Մուհամմատ Ատմանին, որ «Հալէպի գործողութիւններուն ընթացքը կը ստուգէր»:

ՀԱՅԱՍՏԱՆ

# «Քառօրեայ Պատերազմից Յետոյ Տեխնիկական Ցագեցուածութեան Աշխատանքներն Աւելի Արագ են Ընթանում». Օհանեան

ԵՐԵՒԱՆ, «Արմէնփրէս».- 31 Օգոստոսին լրագրողներու հետ ունեցած զրոյցին ընթացքին Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան յայտարարեց, որ 2016ի քառօրեայ մարտական գործողութիւններուն ընթացքին ի յայտ եկաւ, որ սահմանին վրայ բանակին վիճակը բաւական լաւ է: «Պաշտպանութեան բանակի հատուածում ցոյց տուցին, որ պաշտպանութեան գիծը ինժեներական սարքաւորումներով, թէ՛ խորութեամբ, թէ՛ ամբողջ ճակատով, իր յազմեցուածութեամբ ապահովում է ժամանակակից մարտական գործողութիւնների վարումը», հաստատեց նախարարը:

Սէյրան Օհանեան շեշտեց, որ ժողովուրդին կողմէ պէտք չէ ստեղծուի այն տպաւորութիւնը, թէ սահմանագիծին վրայ կատարելագործման աշխատանքները կը կատարուին միայն 2016 թուականին:

«Պարզապէս համապատասխան աշխատանքներ այսօր վարում են ինժեներական յազմեցուածութեան ուղղութեամբ: Տարբեր տեղերում, որտեղ թեթեւակի փոփոխութիւններ են եղել առաջնագծում լայնամասշտաբ աշխատանքներ են տարւում տեխնիկական միջոցներով, տեսադիտարկման սարքերով յազմեցուածութեան ուղղութեամբ: Յիշեցնում եմ, որ այդ ուղղութեամբ աշխատանքները սկսել են

տարուել դեռ 2013ի վերջին, 2014-2015 թուականներին», դիտել տուաւ նախարարը:

Անոր համաձայն՝ քառօրեայ պատերազմը ստիպած է, որ սահմանագիծին վրայ թեքնիք յազմեցուածութեան ուղղութեամբ աշխատանքները աւելի արագօրէն կատարուին: «Յիշեցնում եմ, որ շատ մարտական գործողութիւններում կանխարգելիչ դերակատարութիւն են ունեցել հէնց տեսադիտարկման սարքերի առկայութիւնը, նրանցից ստացուած տեղեկատուութիւնը եւ տուեալ դիրքերում գործող հրամանատարների, ենթակայ զինուորների հմուտ գործողութիւնները», շեշտեց նախարարը:

Անդրադառնալով շփման գիծին մէջ այսօր տիրող իրավիճակին՝ պաշտպանութեան նախարարը ընդգծեց, որ սահմանին վրայ իրավիճակը համեմատաբար հանդարտ է, կրակոցներուն թիւը քիչ է, սակայն ատրպէյճանական կողմէ խախտումները առկայ են տակաւին: «Այն կրակոցներին, որոնք որ անկանոն են, չենք պատասխանում: Զգտում ենք այնպէս անել, որ լարուածութիւն չլինի, սակայն զինուած ուժերի գործունէութիւնը միշտ էլ փոթորկի նման է. մենք միշտ էլ մեր զգօնութիւնը պահում ենք եւ պատրաստ ենք տարբեր փոթորիկներին դիմագրաւելու», եզրափակեց Սէյրան Օհանեան:



## Հայաստան Կը Զգտի Զարգացնել Համագործակցութիւնը Ճափոնի Հետ

ԵՐԵՒԱՆ, «Ազատութիւն».- Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան՝ 31 Օգոստոսին ընդունելով Ճափոն-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան լիկայի նախագահ Սէյիչիւրո էթոյի գլխաւորած պատուիրակութիւնը, հաստատեց, որ Ճափոն առանձնայատուկ տեղ կը գրաւէ Արեւելեան Ասիոյ երկիրներուն հետ Հայաստանի յարաբերութիւններուն մէջ, եւ որ Հայաստան կը ձգտի համակողմանի ու փոխաշահուած գործակցութիւն զարգացնել բարեկամ Ճափոնի հետ:

Նախագահը յոյս յայտնեց, որ պատուիրակութեան այցելութիւնը նոր խթան պիտի հաղորդէ երկու երկիրներու միջխորհրդարանական կապերու սերտացման՝ որակապէս նոր մակարդակի բարձրացնելով այդ ոլորտին մէջ Հայ-ճափոնական համագործակցութիւնը:

Զրուցակիցները վերլիչեցին 2012 թուականին Հայաստանի նախագահին Ճափոն կատարած պաշտօնական այցելութիւնը, որ, ըստ բոլորին, նոր դուռ բացաւ երկկողմանի համագործակցութեան հետագայ ընդլայնման եւ խորացման դիմաց:

## Բակո Սահակեան Ընդունած է Քրիս Պոհնայեանը



Քրիս Պոհնայեանին եւ «Թիւֆենկեան» բարեսիրական հիմնարկի պարուիրակութեան Արեւիանակերտի մէջ ընդունեց Արցախի արտաքին գործոց նախարար Կարէն Միրզոյեանը:

ԵՐԵՒԱՆ, «Արմէնփրէս».- Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան 31 Օգոստոսին ընդունած է «Թիւֆենկեան» բարեսիրական հիմնարկի պատուիրակութիւնը եւ ամերիկահայ նշանաւոր գրող-հրապարակախօս Քրիս Պոհնայեանը:

Հանդիպման ընթացքին քննարկուած են Արցախի մէջ շարք մը ծրագիրներու իրականացման առնչուող հարցեր: Յատուկ ուշադրութիւն դարձուած է մշակութային ոլորտին:

Նախագահ Սահակեան ողջունած է Քրիս Պոհնայեանի Արցախ այցելութիւնը՝ նշելով, որ անոր աշխատանքները ծանօթ են արուեստասէր հանրութեան եւ կարեւոր դերակատարութիւն ունին արտաքին աշխարհին հայոց պատմութիւնը, յատկապէս՝ Մեծ եղեռնը ներկայացնելու առումով:

*The*  
**Credit Repair**  
*Specialist*

**Մենք կը բարձրացնենք  
Ձեր Credit Score-ը**

BAD	FAIR	GOOD	EXCELLENT
300	640	680	720 850

Late payment, Collection, Charge off, Bankruptcy, Foreclosure  
Chexsystem, Judgment, Tax lien, Repossession, Inquiries

Գլխաւոր տնօրէն՝ Արիան Էդրալի

Enrich Financial

818-858-0060 www.enrichfin.com

**ՀՕՄԻ «Կարս» Մասնաճիւղ, Սանթա Մոնիֆա**  
**Հայերէնի Դասընթացներ**  
Վերամուտ 2016-2017 Տարեշրջանի  
Արձանագրութիւն եւ վերամուտ՝ Ուրբաթ, 9 Սեպտեմբեր, Ժամը 3:30-6  
Դասաւանդութիւններ՝ ամէն Ուրբաթ օր, Ժամը 3:30-6  
Տնօրէնուհի՝ Լեմա Ազիբեան (310) 476-5639  
Ե-մամակ՝ lazirian@gmail.com  
ARS GARS CHAPTER  
FRIDAY ARMENIAN SCHOOL  
3:30 pm – 6 pm  
St Martin of Tours – 11967 W. Sunset Blvd, Los Angeles, CA 92049

ՀԱՅԱՍՏԱՆ

# 4+4+4 Ձեռագրի Ամիսներ Տեսած Բանակցութիւններուն Արդիւնքները Պիտի Զգործնականան

ԵՐԵՎԱՆ, «Երկիր Մեդիա».- 2017ի խորհրդարանական ընտրութիւնները պիտի չսփռուին ուղիղ ելքերով, ընտրողը մատնահետք պիտի չզրոյժմէ, քուէարկութեան միասնական փաստաթուղթ՝ ընտրական քարտ պիտի չունենան ընտրողներուն: 2 օր առաջ կառավարութիւնն ու կեդրոնական ընտրական յանձնաժողովը տեղեկացուցին, որ այս նորամուծութիւնները կը պահանջեն թեքնիք յատուկ կարողականութիւն, որուն ապահովման համար մինչեւ ընտրութիւն երկարող ժամանակաշրջանը բաւարար չէ:

Աւելի կանուխ՝ 30 Յունիսին, Ազգային ժողովը այս փոփոխութիւններուն օրէնքի ուժ տուած էր՝ պայմանով, որ անոնք գործադրուին եթէ գտնուի անհրաժեշտ ֆինանսաւորումը: 2 ամսուան ընթացքին միջազգային կառույցները ֆինանսաւորման միայն բանաւոր հաւաստիացումներ տուած են, լեհական կազմակերպութիւնն ալ իշխանութիւնները տեղեկ պահած է այն մասին, որ քանի մը ամսուան ընթացքին չի հասնիր ապահովելու ընտրական գործընթացի թեքնիք կողմը: Այս բոլորին հետեանքը եղաւ այն, որ ի դերու ելան 4+4+4 ձեռագրի ամիսներ տեսած բանակցութիւնները, ու հիմա կողմերը մեղաւորներ կը փնտռեն:

2 ամիս առաջ քաղաքական ուժերը կը յայտարարէին, որ վերոյիշեալ դրութիւնները գործադրելով ընտրական կեղծիքները պիտի նուազին: Այսօր յայտնի է, որ այս փոփոխութիւնները իրականութիւն չեն դառնար, իսկ ասոր համար ընդդիմութիւնը կը մեղադրէ իշխանութիւնը, իշխանութիւնը՝ միջազգային կազմակերպութիւնները:

«Վերջին երկու ամիսը ահագանգում էի, որ խոստացուած գումարը կայ, բայց գործընթացը տարբեր պատճառներով միտումնաւոր ձգձգում էին, որ տապալուէր: Տարբեր պատճառաբանութիւններով՝ Հայաստանից բացակայելու, ներքաղաքական իրավիճակի լարուածութեան, չգիտեմ՝ ով հանրակրօնութիւնում չէ, հնարաւոր չէ հաւաքուել-քննարկել, ուղղակի ժամանակ ձգեցին», դիտել տուած է Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան խմբակցութեան ղեկավար Նայիրա Զոհրաբեան:

Իշխանութիւնը, ըստ Նայիրա Զոհրաբեանի, դանդաղած է, ըսած են, որ մինչեւ գումարը չապահովուի, թեքնիք խնդիրները լուծող կազմակերպութիւններուն հետ բանակցելը լուրջ չէ: Վարած են բանակցութիւններ միայն մէկ լեհական կազմակերպութեան հետ, որ ըսած է,

թէ ուշացած են: «Մենք ինքերս կապուեցինք, պատասխանը, այո, այդպիսին էր, դուք ուշացել էք ոչ միայն 10, այլ 2 մատի մատնահետքի ներքեռնման եւ նոյնականացման քարտերի արտադրման հարցում, եւ որեւէ իրեն յարգող կազմակերպութիւն նման անիրականանալի պատասխանատուութեան տակ չի մտնի», դիտել տուած է Զոհրաբեան:

«Իշխանութիւնը գործընթացը չի ձախողել, պարզապէս ժամկէտները թոյլ չեն տուել գործընթացը սկսել», ըսած է Հայաստանի Հանրապետական կուսակցութեան խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեան:

Անոր համաձայն՝ միջազգային կառույցներն ալ յատուկ հետաքրքրու-



թիւն չեն ցուցաբերած Հայաստանի ընտրական համակարգը բարեփոխելու առումով: «Եթէ միջազգային կառույցները չհաջողուած լինէին, ժամանակին գումարները կը տրուէին: Յիշում էք՝ նոյնիսկ տարբեր յայտարարութիւններ եղան՝ մենք գրանտ տուող չենք եւ այլն: Իսկ որ ասում են, թէ գումարներ եղել են, թող գրաւոր ցոյց տան, թէ երբ են եղել», ըսած է ան:

Վահրամ Բաղդասարեանի համաձայն՝ միջազգային կառույցներուն հետ բանակցութիւններուն արդիւնաւէտութիւնը միայն իշխանութեանէն կախուած չէ. «Նրանք բանակցում են ոչ թէ «Հանրապետական»ի, այլ ամբողջ քաղաքական դաշտի ու քաղաքացիական հասարակութեան հետ»:

«Ի՞նչ է, միջազգային կառույցները աւելի շատ իշխանութեան հետ են բանակցում, նոյն ամերիկեան, եւրոպական կազմակերպութիւններն ընդդիմութեան հետ աւելի շատ են բանակցում, ինչո՞ւ են հիմա ասում, թէ իշխանութիւնը ձախողել է գործընթացը», հարց տուած է Բարգաւասարեան:

Հիմա իշխանութիւնը կը փորձէ ընտրական գործընթացին նկատմամբ հանրութեան վստահութիւնը շահող այլ քայլ առնել. կը քննարկուի քուէարկած ընտրողներու ցանկերը հրապարակելու հարցը: Վենետիկի յանձնաժողովը ասոր դէմ է, բայց եթէ իշխանութիւնն ու ընդդիմութիւնն այս հարցին շուրջ համաձայնութիւն գոյացնեն, պիտի դիմեն յանձնաժողովին ու ըսեն՝ հանրութեան վստահութեան խնդիրը մեզի համար աւելի կարեւոր է: Անոր պիտի յանձնարէ հերթական փոփոխութիւնը Ընտրական օրէնագիրքին մէջ՝ 12 Սեպտեմբերին մեկնարկող աշխատանքին նստաշրջանի առաջին քառօրեային:



## Նայրանդեան Եւ Լաւրով Քննարկած Եւ Լեռնային Ղարաբաղի Տագնապը

ԵՐԵՎԱՆ.- 31 Օգոստոսին Հայաստանի եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարներ էդուարդ Նայրանդեան եւ Սերգէյ Լաւրով ունեցած են հեռաձայնային զրոյց մը: Այս մասին տեղեկացուցած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը:

Նախարարները քննարկած են երկկողմանի արտաքին քաղաքական փոխգործակցութեան, ինչպէս նաեւ ղարաբաղեան կարգաւորման իրավիճակին վերաբերող հարցեր:

Սերգէյ Լաւրով իր Հայ պաշտօնակիցը շնորհաւորած է ռուսական Բարեկամութեան շքանշանով պարգեւատրուելուն համար:

## Հայաստան Իրանին Պիտի Յանձնել Ուր Դատապարտեալ

ԵՐԵՎԱՆ, «Արմէնփրէս».- Իրանի արտաքին գործոց փոխնախարար Հասան Քաշբաւին յայտնած է, որ իրանցի ուժ դատապարտեալներ Հայաստանէն պիտի յանձնուին Իրանին:

Իրանեան «Մեհր» լրատու գործակալութեան համաձայն՝ Քաշբաւի տեղեկացուցած է, որ դատապարտեալները Իրան պիտի հասնին յառաջիկայ 24 ժամուան ընթացքին:

Նշենք, որ Մարտին իրանցի այլ վեց դատապարտեալներ ալ արտայանձնուեցան Իրանին: 21 Մարտ 2015էն Հայաստանէն արտայանձնուած իրանցիներուն թիւը եղած է 27 դատապարտեալ: Անոնց մեծ մասը մեղադրուած է Հայաստան կատարած այցելութեան ընթացքին ապօրինի զեղեր փոխադրելու յանցանքով: Ներկայիս Հայաստանի բանտերուն մէջ կայ 32 իրանցի:

MEDERLANDER CONCERTS BY ARRANGEMENT WITH PATRICK SHART & ALAIN BOYACI PRESENTS

'ENTERTAINER OF THE CENTURY' - CNN

# CHARLES AZNAVOUR

FRIDAY, OCTOBER 28  
PANTAGES THEATRE

Ticketmaster.com | 800-745-3000 | HOLLYWOODPANTAGES.COM

CHARLESAZNAVOUR.COM | #AZNAVOUROFFICIEL | @AZNAVOUR | Francesco Smailo

MEDERLANDER CONCERTS

ԿԼԵՆՏԷՅԼ ԳԼԵՆԴԵԼ



Առողջապահական Մարզի Շարժ Մը Կազմակերպութիւններ Կը Զօրակցին Քասախեանի Ընտրապայքարին

ԿԼԵՆՏԷՅԼ.- Արտաշէս Արտի Քասախեանի ընտրապայքարի գրասենեակը կը տեղեկացնէ, թէ շրջանին մէջ գործող առողջապահական մարզի շարք մը կազմակերպութիւններ որոշած են զօրակցել Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի 43րդ ընտրատարածքի ընտրութեանց աւարտական հանգրուանին հասած Քասախեանի ընտրապայքարին: Քասախեանի զօրակցողներուն միացած են Առողջապահական մարզի աշխատակողմներու միութիւնը (UHW), Երկարատեւ առողջապահական սպասարկութեանց մարզի աշխատակողմներու միութիւնը (LTHW), Հանրային մարզի առողջապահական մարզի միութեան թիւ 721 մասնաճիւղը եւ Արձանագրուած Հիւանդապահներու միութեան թիւ 121 մասնաճիւղը:

Նշեալ կազմակերպութիւնները կը ներկայացնեն աւելի քան 150,000 Հիւանդապահներ եւ առողջապահական մարզի այլ աշխատակողմներ: Քասախեան շնորհակալութիւն յայտնեց սոյն կազմակերպութեանց՝ անոնց ցուցաբերած աջակցութիւնը պատիւ համարելով: Յիշենք, որ Արտի Քասախեան հասակ նետած է Կլենտէյլի մէջ եւ 2005էն ի վեր նոյն քաղաքի քարտուղարն է: Անոր ընտրապայքարը ապահոված է նահանգային եւ գաւառային աշխատակողմներու շարք մը միութեանց եւ բազմաթիւ պաշտօնատարներու զօրակցութիւնը: Քասախեանի ընտրապայքարին մասին յաւելեալ տեղեկութեանց համար, այցելել [www.ArdayforAssembly.com](http://www.ArdayforAssembly.com) կայքը:

Համազգայինի Թատերական Միաւորը Կը Ներկայացնէ Վահէ Ասատուրեանի «Ծաղկամանի Գաղտնիքը»

Վերջին չորս տարիներուն ընթացքին, թատերական յաջող ծրագիրներ իրագործելէ ետք, անցեալ տարի Համազգայինի Շրջանային վարչութիւնը ստեղծեց Համազգայինի Թատերական միաւորը: Թատերականի հետապնդած բազմաթիւ նպատակներու շարքին են աշխուժացնել թատերական արուեստը եւ անոր ընդմէ-

կապատանեկան շատ հաճելի թատերախաղին: Աւելի քան 15 դերակատարներով, մեծ թափով կ'ընթանան փորձերը, կը պատրաստուին բեմայարդարման համար անհրաժեշտ առարկաները, լոյսի խաղերը, երաժշտական կտորները, նորարական հսկայ տիկնիկները, եւ այլն: Ներկայացումները տեղի պիտի



ջէն Հայկական մշակոյթն ու յատկապէս լեզուն տարածել երիտասարդներու եւ երեխաներու մօտ: Այս ծիրէն ներս շեշտը կը դրուի նաեւ մանկապատանեկան ներկայացումներու վրայ, թիրախ ունենալով հայ աշակերտութիւնը: Անցեալ տարուան ընթացքին

ունենան, Barnsdall Gallery Theatre-ին մէջ, Սեպտեմբեր 28, 29, 30ին՝ դպրոցներու համար, իսկ Ծաղաթ Հոկտեմբեր 1ին բոլոր մեծ ու փոքր թատերասէրներուն համար: Տոմսերու համար դիմել [itsmyseat.com](http://itsmyseat.com), 818-538-4911, իսկ

Ձեր Լուրերը Քաղեցէք «ԱՍՊԱՐԷՋ»էն

Advertisement for Arsen Hovanesyan, M.D. Honest Cardiology and Internal Medicine. Includes text about board certifications, quality care, and contact information for Glendale Adventist Medical Center.

Advertisement for Hamazkayin Theatre Company presenting 'The Secret of the Flower Pot'. Includes details about the play, cast, and performance dates.

կազմակերպուեցան երեք 8-շաբաթեայ թատերական աշխատադասեր, ղեկավարութեամբ երիտասարդ արուեստագէտ, UCLA-ի շրջանաւարտ՝ Վանէ Ասատուրեանի: Ան նաեւ բեմադրիչն է Սեպտեմբերին բեմ բարձրացող «Ծաղկամանի Գաղտնիքը» ման-

ԿԼԵՆՏԷՅԼ ԳԼԵՆԴԵԼ

Գլենդելի Դաւթեան եւ Մարիամեան Կրթական Հաստատութիւնում Արդէն Հայաստանեան Դասագրքերով Կը Դասաւանդեն

«Հայերն Այսօր».- Գլենդելի Դաւթեան եւ Մարիամեան կրթական Հաստատութեան նախագահ Վահիկ Մատուրեանը նոր՝ 2016-2017թթ. ուսումնական տարուան ընդառաջ, ողջոյնի խօսք է յղել Հաստատութեան ուսուցիչներին, աշակերտներին եւ ծնողներին, որոնք մասնաւորապէս ասում է.

նոր եռանդով եւ աւելնով են պատրաստուած 2016-2017թթ. ուսումնական տարուան: Դաւթեան եւ Մարիամեան կրթական Հաստատութիւնը շնորհաւորում է բոլոր ուսուցիչներին ու աշակերտներին՝ մաղթելով յաջողութիւն եւ աշխատանքային բեղմնաւոր ընթացք: Նկատի ունենալով «Պայքար ձուլման դէմ» կարգախօսը՝ Դաւ-



թիւնը, աւանդոյթի համաձայն, այս տարի Սեպտեմբերի 1ին, ամերիկեան 7 քաղաքների 26 դպրոցներում կրկին վերսկսում է Հայերէնի դասընթացների իրականացումը:

Սիրով տեղեկացնում ենք, որ վերջերս ուսուցչական շուրջ 60 հոգանոց անձնակազմի հետ կայացել է հանդիպում, որտեղ վարչութեան կողմից նրանց համապատասխան ցուցումներ եւ առաջադրանքներ են տրուել:

Կրթական Հաստատութեան աշակերտների ծնողներն այս տարի առաւել քան հետաքրքրուած են եւ իրենց երեխաներին Հայեցի կրթութիւն, դաստիարակութիւն փոխանցելու ակնկալիքով՝ ոգեւորութեամբ բերում են մեզ մօտ: Իսկ մեր ուսուցիչները



թեան եւ Մարիամեան կրթական Հաստատութիւնը շարունակում է Հայաստանից դուրս ծաւալել ԱՄՆի մատղաջ սերնդի Հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանն ուղղուած ազգանուէր աշխատանքները:

Յանկանում ենք տեղեկացնել նաեւ, որ այս տարի, առաջին անգամ մեր աշակերտները Հայաստանեան դասագրքերով պէտք է դասաւանդուեն: Օգտուելով առիթից՝ կրկին շնորհակալութիւն ենք յայտնում ՀՀ սփիւռքի նախարարութեանը՝ յանձինն նախարար Հրանոյշ Յակոբեանի, Հաստատութեանը տրամադրած բազմաքանակ ու բազմաբովանդակ դասագրքերի, աշխատանքային տետրերի եւ մեթոդական ձեռնարկների համար»:

«Սարդարապատ» Գրատունը Ստացած է...


ԿԼԵՆՏԷՅԼ.- «Սարդարապատ» գրատունն հասած են «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար» շարքի 12րդ հատորէն օրինակներ:

Ստանալու համար, այցելել գրատուն (225 S Glendale Ave. Suite B, Glendale, CA 91205), կամ դիմել (818) 500-0790 թիւին ու books@sardarabad.org հասցէին:



«Թեւանիկ» Ժապաւէնը Ներառուած է Կլենտէյլի Միջազգային Փառատօնի Մրցութային Ծրագիրին Մէջ

ԵՐԵՒԱՆ, «Արմէնփրէս».- Զիւան Աւետիսեանի «Թեւանիկ» ժապաւէնը պիտի մասնակցի Կլենտէյլի շարժապատկերի միջազգային փառատօնին: Ժապաւէնին Գիմատետրի էջին վրայ նշուած է, որ «Թեւանիկ»ը առաջադրուած է «Լաւագոյն արտասահմանեան ֆիլմ» անուանակարգին մէջ: Ծարժապատկերի փառատօնը տեղի պիտի ունենայ 28 Սեպտեմբերէն 5 Հոկտեմբեր, անոր ծիրին մէջ «Թեւանիկ»ը պիտի ցուցադրուի 4 Հոկտեմբերին: «Թեւանիկ» ժապաւէնը արտադրուած է «Ֆիշ այ Արթ» մշակութային հիմնադրամին կողմէ (2014)՝



Հայաստանի ազգային շարժապատկերի կեդրոնին եւ լիթւանական «Արթպոքս» շարժապատկերի ընկերութեան հետ համագործակցութեամբ: Ժապաւէնի արտադրիչներն են Մասիս Բաղդասարեան, Գէորգ Գէորգեան եւ Կեստուտիս Դրազդաուսկաս: Ժապաւէնը արդէն իսկ մասնակցած է բազմաթիւ փառատօններու եւ արժանացած բազմաթիւ մրցանակներու:

ALL FOR HEALTH, HEALTH FOR ALL. COMMUNITY HEALTH CENTER DR. NOOBAR JANOIAN, PRESIDENT

Կրունկների Ճաֆեր

Կրունկների վրայի ճաքերի առաջացման պատճառը մաշկի չորութիւնն է, իսկ ոտնաթաթերը մարմնի առաւել ծանրաբեռնուած հատուածներն են: Կրունկների ճաքերը վտանգաւոր ու ցաւոտ չեն, բացառութեամբ այն դէպքերի, երբ ճաքերը շատ խորն են եւ որպէս կանոն, նրանք դառնում են շատ ցաւոտ եւ մաշկը սկսում է արնահոսել:

Ճաքերից խուսափելու համար՝ կրունկները պէտք է մաքրել մաշացած կոշտ մաշկից եւ խոնաւ պահել՝ քսուկների կամ ստորեւ առաջարկուող միջոցներով: Մինչեւ քնելը, խոնաւ է մի փոքր հեղուկ օճառ տաք ջրի հետ եւ 20 րոպէս ոտքերը դրէք այդ օճառաջրի մէջ, որից յետոյ քերիչի օգնութեամբ մաքրէք կոշտացած հատուածները: Կարելի է ջրին սոդա կամ աղ աւելացնել:

Փափկեցնելու համար կրունկներին ձիթաւիղ քսէք, մերսէք՝ ապա 1 ժամ հագուէք բամբակեայ գուլպաներ: Կարող էք օգտագործել նաեւ այլ տարբերակ. շշի մէջ խոնաւ էք 1 ճ/գ ձիթաւիղ, մի քանի կաթիլ կիտրոնի հիւթ կամ նարդոսի իւղ եւ նոյն քանակութեամբ ջուր:

Կիտրոնի հիւթը հիանալի հեռացնում է մաշկի մահացած բջիջները եւ արդիւնքում մնում է փափուկ ու հարթ մաշկը:

Կարող էք կիտրոնը բաժանել 2 մասի, չփէք (5 րոպէս) այն կրունկի վրայ այնպէս, որ սեղմելու ժամանակ հիւթը լցուի ճեղքերին վրայ:

Քնելուց առաջ ոտքերին քսէք խոնաւեցնող քսուկ ու քնելուց առաջ հագուէք բամբակեայ գուլպաներ: Սովորոյթ դարձրէք խոնաւեցնող քսուկ օգտագործել ամէն անգամ՝ լողանալուց յետոյ եւ քնելուց առաջ:

**ԿԼԵՆՏԵՅԼ ԳԼԵՆԴԵԼ**

**«Արփա»ի Կազմակերպութեամբ՝ «3 Շաբաթ Երեւանում» Ֆիլմին Բացումը Սեպտեմբեր 14ին**

«Արփա» հիմնարկին կազմակերպութեամբ, վաճառքի և վաճառքի Փիրհամգեյի բե-

տի ցուցադրուի Չորեքշաբթի, Սեպտեմբեր 14ին, Հոլիվուսի «Egyptian Theatre»ի մէջ: Ֆիլմի



Նանոր Բերրոսեան (ձախին), Վահիկ Փիրհամգեյի, Վահէ Պերերեան եւ Անի Գալստեան՝ նկարահանման ընթացքին

մադրած «3 Շաբաթ Երեւանում» ֆիլմը Միացեալ Նահանգներու մէջ առաջին անգամ ըլլալով պի-

ներկայացումէն ետք Հարցազրոյց մը տեղի պիտի ունենայ երեք կեդրոնական դերասաննե-



«3 Շաբաթ Երեւանում» ֆիլմի նկարահանումէն տեսարան մը

րուն՝ վաճառքի Պերպերեանի (Հեղինակ, բեմադրիչ), վաճառքի Փիրհամգեյի (արտադրիչ, բեմադրիչ) եւ Հրանդ Թորոսեանի հետ: Իսկ Սեպտեմբեր 16էն սկսեալ, ֆիլմը պիտի ցուցադրուի էնսինոյի եւ Փասատինայի «Laemmle» սրահներուն, ինչպէս նաեւ Կլենտէյլի «MGN Five Star Cinemas»ի մէջ: Հայերէնով պատրաստուած

(անգլերէն ենթագիրներով) ֆիլմը կը պատմէ, թէ ինչպէ՛ս երկու ընկերներ, մէկը՝ իրանահայ, Երեւան կ'երթան իրենց Հայաստանցի գործակիցին հետ ֆիլմ մը պատրաստելու համար, բայց շուտով կ'անդրադառնան, որ ոչինչ պիտի ընթանայ իրենց ակնկալածին պէս:

Վաճառքի Պերպերեանի բեմադրութիւնը, որ հիմնուած է Նարբէ Նազարեանի հեղինակած պատմութեան վրայ, կը ներկայացնէ ազնիւ եւ հաճելի պատմութիւն մը, որ հարուստ է հոյակապ կերպարներով: Կերպարներ, զորս կը մարմնաւորեն Աշոտ Ղազարեանի, Նարեկ Տուրեանի, Սորէն Լեւոնեանի եւ Լեւոն Յարութիւնեանի նման տաղանդաւոր դերասաններ: Անոնց կողքին, իրենց ընկերներուն նեցուկ կանգնելու համար, մանր դերերով իրենց հաճելի մասնակցութիւնը բերած են նաեւ երգիչներ Թաթա Սիմոնեան, Նունէ Եսայեան, Ինգա եւ Անուշ, Էրիք, Քրիսթինէ Բէքէլեան, Շուշան Պետրոսեան, Արամո եւ շարք մը այլ տաղանդներ:

«3 Շաբաթ Երեւանում» ֆիլմին բացումը (premiere) պիտի կատարուի Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7ին՝ քոթէյլով, իսկ ֆիլմը պիտի ներկայացուի ժամը 8ին եւ անկէ ետք տեղի պիտի ունենայ Հարցազրոյցը:

Տոմսերը սահմանափակ ըլլալով, կ'առաջարկենք, որ ձեր տեղերը անմիջապէս ապահովէք՝ այցելելով [itsmyseat.com/3weeks](http://itsmyseat.com/3weeks) կայքէջը: Կրնաք նաեւ հեռաձայնել հետեւեալ թիւին՝ (818) 500-0700:

«Շատ կարեւոր է, որ բացման առաջին շաբաթը ֆիլմին բոլոր ցուցադրութիւնները, մանաւանդ՝ matinee-ները, անպայման լեցուին, որպէսզի սինեմաները շարունակեն ցուցադրել ֆիլմը», կ'ըսէ արտադրիչ Փիրհամգեյի, աւելցնելով, որ հանդիսատեսին կողմէ առաջին շաբաթը ցուցաբերուած հետաքրքրութիւնը կ'որոշէ ֆիլմին ճակատագիրը, եւ նկատի առնելով, որ ֆիլմը միայն Հայ Հասարակութեան համար պատրաստուած չէ, որքան երկար ցուցադրուի՝ այնքան աւելի օտարներ առիթ պիտի ունենան դիտելու:

Լոս Անճելըսէն ետք, ֆիլմը պիտի սկսի ցուցադրուելու Միացեալ Նահանգներու, ապա եւ Սփիւռքի Հայաշատ քաղաքներուն մէջ:

Ֆիլմին մօտէն ծանօթանալու համար, կրնաք այցելել անոր «Ֆէյսպուք»ի էջը. [www.facebook.com/3weeksinyerevan](http://www.facebook.com/3weeksinyerevan):



**Մուսա Լերան  
Հերոսամարտին  
Նուիրում  
Երկօրեայ Տօնախմբութիւններ**

Կազմակերպութեամբ՝  
**Քալիֆորնիոյ Մուսա Լեռ Միութեան**

**Շաբաթ, 10 Սեպտեմբեր 2016**  
Երեկոյեան ժամը 8էն սկսեալ Խրախճանք եւ Հերիսայի պատրաստութիւն,  
Հոլիվուսի Հայ Կեդրոնէն Ներս  
1614 N. Alexandria Ave., Los Angeles, CA 90027

**Կիրակի, 11 Սեպտեմբեր 2016**  
Առաւօտեան Ս. Պատարագ  
Հոլիվուսի Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ  
Ապա Հերիսայի օրհնութիւն եւ բաշխում

**Այնուհետեւ Մուսա Լերան Հերոսամարտի նուիրում  
Յատուկ ձեռնարկ եկեղեցոյ կից՝ Հոլիվուսի Հայ Կեդրոնը**  
1559 N Kenmore Ave, Los Angeles, CA 90027

Օրուան Պատգամախօս՝ Հայաստանէն հրաւիրուած  
**ՊՐՆ. ՌԱՖՖԻ ՏՈՒՏԱԳԼԵԱՆ**  
Տնօրէն՝ Թի.Ֆէնքեան Հաստատութեան

**Հայկական տոհմիկ պարերով ձեռնարկը պիտի ձոխացնէ  
Լիլիա Մարգարեանի Ղեկավարած «Լիլիա» Պարախումբը**

**Երկու օրերուն ալ պիտի հնչէ  
Մուսա Լերան ասանդական Տիոյն ու Զուռնան**

Մանրամասնութիւններու համար հեռաձայնել  
Վրէժ Գեորգեանին (818) 335-0841, Յասմիկ Շերպէշեանին (818) 642-2291



ԿԼԵՆՏԵՅԼ ԳԼԵՆԴԵԼ

«Սուրբ Ներսէս Շնորհալի» Շֆանչանը՝ Իրաւարան էտվին Մինասեանին

ՄԻՄՈՆ ԱՃԸԻԼԱՃ

ՊԸՐՊԵՆՔ, «Մարմարա».- Կիրակի, Օգոստոս 28 թուականը Լոս Անճելըսի Պոլսահայ միութեան ուրախ ու պատուաբեր օրերէն մին Հանդիսացաւ, որովհետեւ միութեան հոգաբարձութեան ատենապետ՝ իրաւարան էտվին Մինասեան, Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք.

ղիկոս Գարեգին Բ.ի կոնդակը, իսկ առաջնորդ սրբազան Հայրը էտվին Մինասեանի օձիբին ամրացուց «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանը:

Սրբազան Հայրը բարձր գնահատեց էտվին Մինասեանի նուիրումը՝ Պոլսահայ միութեան գործունէութեան եւ յառաջդիմութեան ի խնդիր: Սրբազանը դիտել տուաւ, որ զոհողութիւնը էտվինի կեանքին ու գործին մէջ որդեգրուած



Տէրտէրեանի բարեխօսութեամբ, պարգեւատրուեցաւ սրբատու կոնդակով եւ «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանով:

Առաջնորդարանի Սրբոց Ղեւոնդեանց Մայր տաճարը խուռներամ լեցուն էր հաւատացեալ ժողովուրդով: Օրուան պատարագին էր եկեղեցւոյ հովի Սաթակ քէնյ. Շահպագեան, Հանդիսապետութեամբ առաջնորդ սրբազան հօր եւ ներկայութեամբ նախկին առաջնորդ Վաչէ արք. Յովսէփեանի: Ս. պատարագի երգեցողութիւնը կատարեց «Սաչատուրեան» դպրաց դասի երգչախումբի երկսեռ խումբը, ղեկավարութեամբ՝ փոխղեկավար Ալենուշ եղիազարի:

Պատարագի ընթացքին, պատարագիչ տէր Հայրը «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ կարդաց Ամենայն Հայոց կաթո-

ղագցում մը դարձած է:

Սրբազանը իր քարոզը կեդրոնացուց հաւատքի վրայ: Եթէ հաւատք ունիս եւ այդ հաւատքը կը գործածես գործի մը մէջ, ապա իբրեւ ազգային գործիչ՝ մշակութային միութիւններու եւ բարեգործական հաստատութիւններու զարգացման ընթացքին գոյացած դժուարութիւնները կրնաս յաղթահարել առանց վախնալու, ըսաւ ան եւ աւելցուց. «էտվինը եղած է անձնաւորութիւն մը, առաջնորդ մը, որ Պոլսահայ միութեան իր գործակից ընկերներուն հետ միասին բարձր պահած է միութեան առաքելութիւնը պոլսահայ համայնքէն, ինչպէս նաեւ Լոս Անճելըսի հայ գաղութէն ներս»:

էտվին Մինասեան ո՛չ թէ միայն ազգօգուտ ծառայութիւն կը տանի Պոլսահայ միութեան երդիբին



ներքեւ, այլ նաեւ իր ազգային ծառայութիւնը կը բերէ Ամերիկայի Հայ իրաւաբանական միութեան եւ «Արարատ Տան» հոգաբարձութեան ընդմէջէն:

Պարգեւատրման արարողութեան ներկայ գտնուեցան պարգեւատրեալին ծնողքը՝ տէր եւ տիկին էտվար Մինասեանները, ազգականներն ու հարազատները, ինչպէս նաեւ Պոլսահայ միութեան գործադիր մարմնի ատենապետ Բաֆֆի Մարուքեանն ու իր վարչական ընկերները, Պոլսահայ միութեան մշակութային յանձնախումբի ատենապետ տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան եւ իր յանձնախումբի ընկերները, Սրբոց Ղեւոնդեանց Մայր տաճարի եւ «Արարատ Տան» վարչութեանց ատենապետ իրաւաբան Յովսէփ Կանիմեան եւ իր գործակից ընկերները, Ամերիկայի Հայ իրաւաբանական միութեան վարչութեան ատենապետ իրաւաբան Կարօ Ղազարեան եւ իր գործակից ընկերները:

Յաւարտ Ս. պատարագի, սրբազան Հայրերը, վերոյիշեալ ներկաներն ու կարգ մը հաւատացեալներ հաւաքուեցան առաջնորդա-

րանի «Արմէն Համբար» սրահը, ուր սարքուեցաւ կոկիկ հիւրասիրութիւն մը՝ ի պատիւ էտվին Մինասեանի: Սրբազան Հայրը անգամ մը եւս իր գնահատանքն ու շնորհաւորութիւնները փոխանցեց պարգեւատրեալին: Իսկ էտվին, իր կարգին ըսաւ, որ եթէ ուրիշ ձեռնարկ մը ըլլար, ապա շատ դիւրութեամբ բառերը քով քովի բերելով՝ երկար կրնար խօսիլ, «բայց եւ այնպէս, երբ խօսքը կամ ձեռնարկը իմ մասին է, դժուար է արտայայտուիլ»: Ան շնորհակալութիւն յայտնեց վեհափառ հօր, որ «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանը իրեն արժանի տեսած է. շնորհակալութիւն յայտնեց Յովնան սրբազան հօր, որ բարեխօս եղած է, ինչպէս նաեւ՝ առաջնորդ Վաչէ սրբազանին, որ միշտ զօրավիգ կանգնած է Պոլսահայ միութեան գործունէութեան, եւ բոլոր անոնց, որոնք զինք յարգած էին եւ իրենց ներկայութիւնը բերած այս յատուկ եւ պատուաբեր օրուան:

Ներկաները ուրախ տրամադրութեամբ զրուցեցին էտվինին հետ, ապա առողջութեան ու յաջողութեան մաղթանքներով բաժնուեցան սրահէն:

Կը շնորհաւորեմ «Ասպարէզ»ի 108րդ տարեդարձը եւ կ'ուզեմ մասնակից ըլլալ անոր յարատեւ վերելքին:

Այս առթիւ «Ասպարէզ»ին կը նուիրեմ

\$108 տուլար  \$50 տուլար

Այլ գումար \_\_\_\_\_

Check  Credit Card

Name \_\_\_\_\_

Address \_\_\_\_\_

Phone \_\_\_\_\_ email \_\_\_\_\_

Credit Card # \_\_\_\_\_

Exp. Date \_\_\_\_\_ CCV \_\_\_\_\_  Visa  MC  AMEX



YOUR DONATION IS TAX DEDUCTIBLE

# «Արմինիըն Արթս» Պատկերասրահի Բացումն Ազդարարուեց Լուսանկարիչ Արվին Քոչարեանի «Միստիկուս» Ցուցահանդեսով

ՆԱՆԷ ԱՌԱԳԵԱՆ

Գլենդելի մշակութային կեանքում, Օգոստոսի 24ին տեղի ունեցավ իւրատեսակ համալրում. արդարեւ՝ բացուեց «Արմինիըն Արթս» (Armenian Arts) պատկերասրահը: Հիմնադիր Ստեփան Փարթամեանի խօսքով՝ իր նպատակն է սոյն ցուցասրահի միջոցով առիթ ընձեռել հայ ստեղծագործողներին ներկայանալու առաւել լայն հանրութեանը ու խթանել հայկական մշակույթի

որը զուգահեռ զարգացել է գրականութեան, կրօնի եւ արուեստի տարբեր ոլորտներում, հիմնականում սկիզբ առնելով Ֆրանսիայում ու Գերմանիայում: Իմ հերոսներին պատկերում եմ առաւել մոայլ, մելանխոլիկ հոգեվիճակներում: Իմ ստեղծած կերպարները դիտողներից շատերին առիթ են տալիս անդրադառնալու իրենց իսկ հոգեվիճակներին, մտահոգութիւններին. նրանք յաճախ գտնում են իրենց այդ լուսանկարներում», նշում է Քոչարեանը:



տարածումը:

«Մենք՝ հայերս, ընդհանրապէս նորայայտ ստեղծագործողներին շատ չենք քաջալերում, եւ ընդունում ենք նրանց միայն հանրայայտ դառնալուց յետոյ: Այս ցուցասրահը միտուած է փոխելու այդ կարծրատիպը, եւ հարթակ է տրամադրելու հիմնականում կերպարուեստի ու լուսանկարչութեան ոլորտում գործող՝ դեռեւս ոչ շատ ճանաչուած արուեստագէտների նաեւ», հաւաստիացնում է Փարթամեանը:

Նրա հաւաքածուի հիմնական հերոսները յայտնի դէմքեր են՝ դերասաններ, հաղորդավարներ, արուեստագէտներ, մոդելներ, որոնք ներկայացուած են սովորականից տարբեր իրավիճակներում, արտասովոր կերպարներում, նաեւ՝ մերկ: Արվին Քոչարեանը նշում է, որ նկատում է մարդկանց ներքին, երբեմն՝ ոչ ակնյայտ յատկանիշները, որոնք փորձում է վեր հանել եւ ցոյց տալ իր լուսանկարներում:

2015 թուականին, այս հաւաքածուն ներկայացուել է Բերլինի յայտնի ցուցասրահներից մէկում եւ մեծ արձագանգ է ունեցել: Իսկ Օգոստոսի 24ին, «Արմինիըն Արթս»-ում, ամերիկեան հանդիսատեսը նոյնպէս բարձր գնահատեց լուսանկարչի աշխատանքները՝ ընդգծելով Քոչարեանի ուրոյն ոճը: Ստեփան Փարթամեանն էլ կոչ արեց քաջալերել երիտասարդ արուեստագէտին՝ նաեւ գնելով լուսանկարները:

\*\*\*

Տեղեկանք.- Արվին Քոչարեանը Իրանից Հայաստան է տեղափոխուել 2001ին, եւ այդուհետ ապրում ու ստեղծագործում է Հայրենիքում: «Հայաստանի անկեղծութիւնն ու էներգետիկան ինձ գրաւեցին միանգամից: Սկզբում մէկ շաբաթով որպէս զբօսաշրջիկ այցելեցի Հայաստան, ապա վերադարձից երկու շաբաթ անց՝ տեղափոխուեցի մշտական բնակութեան», նշում է Քոչարեանը: Նա սովորել է Երեւանի Գեղարուեստի Պետական ակադեմիայում, եւ աւարտել որպէս «գրաֆիկական դիզայներ»: 2005 թուականին, երեւանում բացել է «Արվին Քոչարեան Փրոդաքշընզ» ընկերութիւնը: «Հայաստանում ապրելու որոշումը գլխաւորաբար պայմանաւորուած էր իմ ընտանիքով: Կարելի է մեր երեխաների մէջ կենդանի պահել կիրքն առ մեր ժառանգութիւնը», համոզմունք է յայտնում արուեստագէտը:



**ԿԼԵՆՏԷՅԼ ԳԼԵՆԴԵԼ**

# 2016ի ՀԵԴ Ամառնային Ճամբարը՝ Ամենայաջողը Իր Պատմութեան Մէջ

**ԿԼԵՆՏԷՅԼ.-** 2016ի ՀԵԴ ամառնային ճամբարը հանդիսացած է 1977ին սկսած ճամբարի պատմութեան մէջ ամենայաջողը՝ ապահովելով մասնակցութիւնը 7-12 տարեկան աւելի քան 1000 բանակողներու եւ անձնակազմի անդամներու:

Այս տարուան ճամբարի 7 շաբաթներուն համար կարելի եղած է առաւելագոյն մասնակցութիւն ապահովել, ինչ որ նոր մրցանիչ մըն էր:

Արցախի քառօրեայ պատերազմի լոյսին տակ, ՀԵԴ ճամբարի վարչութիւնը եւ բանակումները կազմակերպող յանձնախումբը միասնաբար որոշած էին այս տարուան բանակումները նուիրել Արցախին՝ որդեգրելով «Ռայթուտի բլուրներէն՝ Արցախի լեռներ» նշանաբանը: Նշենք, որ բանակավայրը կը գտնուի Ռայթուտի մէջ:


Այս նիւթով ներկայացուած Պերճ Բարսեղեանի դաստիարակչականները յոյժ հետաքրքրական եղան բանակողներուն համար, որոնք աւելիով խանդավառուեցան նաեւ Արիկ Գէորգեանի մատուցած ազգային եւ յեղափոխական երգերով:

Ճամբարին համար պատրաստուած էին վերոյիշեալ նշանաբանով շապիկներ, ջուրի շիշեր եւ երգարաններ, որոնք բաժնուեցան իւրաքանչիւր մասնակիցի:

ՀԵԴ ճամբարը նաեւ գործակցեցաւ ՀԵԴի «Մեր զինուորներուն կողքին» արշախն՝ առիթ ընծայելով իւրաքանչիւր բանակողի, որ նամակներ գրէ հայ զինուորներուն կամ նահատակ զինուորներու ընտանիքներուն:

Այս տարի վերախմբագրուած եւ վերաձեւաւորուած էր նաեւ բանակումին երգարանը՝ ընդգրկելով դաստիարակչական յաւելեալ տեղեկութիւններ: Ճամբարը նաեւ որդեգրած էր նոր եւ աւելի առողջապահական ճաշացուցակ մը:

Այս տարի վերախմբագրուած եւ վերաձեւաւորուած էր նաեւ բանակումին երգարանը՝ ընդգրկելով դաստիարակչական յաւելեալ տեղեկութիւններ: Ճամբարը նաեւ որդեգրած էր նոր եւ աւելի առողջապահական ճաշացուցակ մը:



# WITH OUR SOLDIERS

HONORING THOSE WHO SERVED OUR NATION

Օգնեք զոհուած հերոսներու ընտանիքներուն՝  
կատարելով ձեր նուիրատուութիւնն այսօր:

Մեր նպատակն է հետեւեալ աջակցութիւնն յայտնել  
Ապրիլեան 4-օրեայ պատերազմի ընթացքին  
զոհուած բոլոր մարտիկներու ընտանիքներուն:

**\$1,000** իւրաքանչիւր ընտանիքին

**\$250** յաւելեալ վճարում իւրաքանչիւր  
անչափահաս երեխայի համար

Մեր բոլորին պարտքն է կանգնիլ մեր զոհուած  
զինուորներու ընտանիքներու կողքին:

## DONATE TODAY

[www.withoursoldiers.com/donate](http://www.withoursoldiers.com/donate)



please make checks payable to  
Armenian Youth Federation  
104 N. Belmont St. Suite 313  
Glendale, CA 91206



ԳԱՂՈՒԹՆԵՐ

# Գանատահայ Բեմադրիչին «Հորս» Վաւերագրական Ժապաւէնի Ցուցադրութիւնը

Երկուշաբթի, 22 Օգոստոսին, Մոնթրէալի «Քոնքորտիա» համալսարանին մէջ ներկայացուցաւ գանատահայ Տիանա Սգայայի եւ Լիլիանա Կոմորոսքայի բեմադրած «Հորս» վաւերագրական ժապաւէնը: Ժապաւէնը կը ներկա-

պանութեան ենթարկուած է: Բեմագրութիւնը կը կեդրոնանայ Շուշի ծնած Հօր կողմէ Հայկական արմատներով բեմադրիչ Տիանա Սգայայի լեւ մօրաքրոջ Ալինա Պանտրոսքայի յուշագրութեան վրայ: Յուշերուն մէջ Ալինա Պանտրոսքա կը պատմէ Վինիցիա բնակող իր բանաստեղծ Հօր՝ Ադամ Պանտրոսքի մասին: Լեւ բանաստեղծը կը գնդակահարուի սովետական զաղտնի սպասարկութեան կողմէ:



յացնէ Նորհրդային Միութեան շրջանին, Ուքրանիոյ սահմաններուն մէջ գտնուող լեհաբնակ Վինիցիա քաղաքին մէջ, 1937-1938 տեղի ունեցած սպանութիւններու ժամանակագրութիւնը: «Սթալինեան մաքրագործումներ»ու օղակին մաս կազմող Վինիցիայի ցեղասպանութեան մասին առաջին անգամ ըլլալով վաւերագրական նման ժապաւէն մը կը պատրաստուի: Վինիցիայի եւ անոր շրջակայ բնակավայրերուն մէջ 1937-1938, 100 հազար լեհ ցեղաս-

ջիւր դրուագի եւ խորասուզուելու բանաստեղծական ոճով գրուած բեմագրութեան տողերուն մէջ:

«Հորիգոն» շաբաթաթերթին հետ զրոյցի ընթացքին բեմադրիչ Տիանա Սգայա յայտնած է, թէ յաջորդ իր ծրագիրով Հայկական նիւթ մը պիտի ներկայացնէ Հաւանաբար՝ արցախեան իր արմատներուն մասին:

Նշենք, որ ժապաւէնը ներկայացուած է այս տարուան Քաննի ֆիլմի փառատօնին:

# Արցախի Նուիրուած Վաւերագրական Ֆիլմին Անդրանիկ Ցուցադրութիւնը Իտալիոյ Մէջ



Երեքշաբթի, 23 Օգոստոսին, Իտալիոյ Ռիմինի քաղաքի «Neri Conai» դահլիճին մէջ կայացաւ իտալացի լրագրող ծիան Միքալեսինի «Լեռնային Ղարաբաղ. Պատերազմի Վերադարձը» վաւերագրական ֆիլմի անդրանիկ ցուցադրութիւնը: Զեռնարկը կազմակերպած էր «Նաղաղութեան եւ ազատութեան միջազգային կեդրոն»ը, Ռիմինիի 37րդ հանդիպման ծիրէն ներս: Նախքան ցուցադրութիւնը, ողջոյնի խօսքով հանդէս եկան Իտալիոյ մօտ Հայաստանի դեսպան Վիքթորիա Բաղդասարեան,

ֆիլմի հեղինակ ծիան Միքալեսինի եւ Նաղաղութեան եւ ազատութեան միջազգային կեդրոնի տնօրէն Ռոպերթօ Ֆոնթոլա:

Դեսպան Բաղդասարեան իր ելոյթին մէջ շնորհակալութիւն յայտնեց ֆիլմի հեղինակին՝ Արցախի, ինչպէս նաեւ հակամարտութեան գօտիին մէջ Ատրպէյճանի կողմէ սանձազերծուած ապրիլեան յարձակումներուն մասին ճշմարտութիւնը ներկայացնելուն համար, ինչպէս նաեւ ձեռնարկի կազմակերպիչներուն՝ դեսպանութեան հետ սերտ համագործակցութեան եւ ֆիլմի



# ՀՅԴ Երիտասարդական Միութիւններու Տարածաշրջանային Բանակումը Կիպրոսի Մէջ Իր Աւարտին Հասաւ

ՀՅԴ Միջին Արեւելքի եւ Եւրոպայի երիտասարդական միութիւններու տարածաշրջանային բանակումը, որ իր աշխատանքները սկսած էր 22 Օգոստոսին, Կիպրոսի Թրոտոս լեռնաշղթայի բանակավայրերէն մէկուն մէջ, իր աւարտին հասաւ 28 Օգոստոսին: Բանակումին մասնակցած էին 13 երկիրներէ 65 երիտասարդներ, որոնց շարքին՝ ՀՀԴ Լիբանանի, Մուլիոյ, Իրանի, Ֆրանսայի, Շուէտի, Հոլանտայի, Միացեալ Թագաւորութեան, Արցախի, Հայաստանի, Կիպրոսի եւ այլ շրջաններու երիտասարդական միութիւններու անդամներ:

նեակայացուցին իրենց տեսակէտներն ու առաջարկները արծարծուած նիւթերուն վերաբերեալ:

Տեղի ունեցան մտային ու մարզական մրցոյթներ: Ստեղծուեցաւ ընկերական ջերմ մթնոլորտ: Մասնակիցները, Կիպրոսի մէջ գտնուելու առիթը օգտագործելով, այցելեցին Աֆրոտիթի ծննդավայր Պատրես գիւղը, Նիկոսիոյ ՀՄԸՄ-ՀԵՄ կեդրոնը եւ ծանօթացան Հայ Համայնքին: Բանակումի փակման խօսքով, ՀՀԴ Կիպրոսի կոմիտէին անունով հանդէս եկան Յակոբ Մանուկ-

Եթեմարեանի ծրագիրը բաւական խիտ էր՝ դասախօսութիւններ, քննարկումներ, խմբային աշխատանքներ, մրցոյթներ, այցելութիւններ, խնճոյք եւ ժամանց:



Բանակումին ընթացքին մասնակիցները դասախօսութիւններ ունկնդրեցին Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական իրավիճակին, Արցախի հակամարտութեան բանակցային գործընթացի ներկայ հանգրուանին, Հայոց Ցեղասպանութեան 100ամեակէն ետք ՀՀԴ երիտասարդական միութիւններու աշխատանքային հեռանկարներուն, Հայաստանի եւ Հայութեան առաջնահերթ խնդիրներուն, Հանրային կարծիքի ձեւաւորման մէջ ընկերային ցանցերու դերին, կիպրոսահայ Համայնքի անցեալին ու ներկային եւ Կիպրոսի մէջ ՀՀԴ ներկայութեան վերաբերեալ:

եան եւ ՀՀԴ Բիւրոյի երիտասարդական գրասենեակի պատասխանատու Սարգիս Մկրտչեան:

Յակոբ Մանուկեան նշեց, որ աւելի քան տասը երկիրներէ 65 երիտասարդներու մասնակցութեամբ բանակումը Կիպրոսի մէջ լուրջ ձեռքբերում է, եւ բարի ճանապարհ մաղթեց մասնակիցներուն եւ պատրաստակամութիւն յայտնեց նման միջոցառումներ կրկին հիւրընկալելու Կիպրոսի մէջ:

Դասախօսութիւններէն ետք մասնակիցները խումբերու բաժնուելով քննարկումներ կատարեցին եւ բանակումի վերջին օրը շնորհահանդէսը կազմակերպելուն համար: Դեսպանը հակիրճ կերպով ներկայացուց դարաբաղեան հիմնահարցի պատմութիւնն ու էութիւնը: Ան ընդգծեց, որ ծիան Միքալեսինի ֆիլմը ոչ միայն կը ներկայացնէ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի պայքարի պատմութիւնը, այլեւ կոչ կ'ընէ անտարբեր չըլլալու մարդոց ու ժողովուրդներուն հանդէպ իրականացուող խտրականութեան ու բռնութեան հանդէպ:


Սարգիս Մկրտչեան իր խօսքին մէջ նշեց. «Հայրենիքը մէկ է, չկայ երկրորդը: Հայութեան ներկայ վիճակը անբնական է, դառն ճակատագիրի հետեւանք է: Ուստի Հայաստան եւ Սփիւռք ձեռք-ձեռքի տուած պիտի կերտեն հզօր Հայրենիք: ՀՀԴ երիտասարդական միութիւններու պարտականութիւնն է ամէն ջանք թափել այդ նպատակին հասնելու համար»:

Բանակումի մասնակիցները 28 Օգոստոսին մասնակցեցան Նիկոսիոյ ՀՄԸՄ-ՀԵՄ կեդրոնին մէջ կազմակերպուած ճաշկերոյթին:

ՀՀԴ ԲԻՒՐՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ ԿԻՊՐՈՍ, ԹՐՈՏՈՍ 29 Օգոստոս 2016

«Ասպարէզ»՝ Չեր Տեղեկութիւններու Ամենավստահելի Աղբիւրը

ՀԱՅԱՍՏԱՆ



### Արցախի 25ամեակի Համեստ Ու Բովանդակալից Նախաձեռնություններ

ԵՐԵՎԱՆ, «Ռադիոլուր».- Լեռնային Ղարաբաղի մէջ այս օրերուն պիտի կայանան Լեռնային Ղարաբաղի Հոչակման 25ամեակին նուիրուած նախաձեռնութիւնները, որոնք, ըստ այս ամեակի միջոցառումներու կազմակերպման պետական յանձնաժողովի նախագահ Աշոտ Ղուկեանի, պիտի ըլլան Համեստ ու բովանդակալից: Այս մասին կը գրէ Լուսինէ Աւանեսեան:

Հիմնականօրէն մշակութային են. նախօրեակին Շուշիի մէջ աւարտին հասած է «Յակոբ Գիրջեան» քանդակագործութեան 4րդ միջազգային սիմփոզիումը՝ 9 նոր քանդակ նուիրելով Շուշիին:

Հրապարակուած է Նուարդ Սողոմոնեանի «Օղակ» գիրքը՝ նուիրուած խորհրդային զօրքերուն եւ ատրպէյճանական յատուկ նշանակութեան ջոկատներուն կողմէ Արցախի հայաթափման ծրագիրին, որ տեղի ունեցաւ խորհրդային պետութեան վերջին երկու տարիներուն՝ նախորդելով հանրապետութեան Հոչակման:

Պետական մակարդակով կազմակերպուող նախաձեռնութիւններուն հիմնական մասը տեղի պիտի ունենայ 1-3 Սեպտեմբերին:

(Շար. 16րդ էջ)



**Պահպանէ՛նք  
Լիբանանահայութեան  
Իրաւունքները**

Լիբանանահայերուն կ'օգնենք  
Լիբանանի պետութեան մօտ ՁԻԱԲԱՐ  
արձանագրելու իրենց ծնունդներն ու  
ամուսնութիւնները:  
Յաւելեալ տեղեկութիւններու համար  
հեռաձայնեցէ՛ք հետեւեալ թիւերուն

ST. MARY'S ARMENIAN CHURCH, GLENDALE  
(818) 799 5530

HOLY MARTYRS CHURCH, ENCINO  
(818) 799 6558

ST. SARKIS CHURCH, PASADENA  
(818) 799 6505

FORTY MARTYRS ARMENIAN APOSTOLIC CHURCH  
(818) 799 6220

### Սարի Թաղի Գործով Տուժած Նկատուած Է 19 Լրագրող

ԵՐԵՎԱՆ.- Յատուկ քննչական ծառայութիւնը կը շարունակէ տեղեկութիւն փոխանցել 29-30 Յուլիս 2016ին Սարի Թաղի մէջ տեղի ունեցած դէպքերուն վերաբերեալ քննուող քրէական գործին մասին:

Վերջերս հաղորդուած տեղեկութեան համաձայն՝ քննութիւններուն ընթացքին ենթադրաբար տուժած է 99 քաղաքացի, որոնցմէ 23ը՝ լրագրողներ:

31 Օգոստոսի դրութեամբ յիշեալ

չեն ներկայացած:

Ըստ քրէական գործով ձեռք բերուած տուեալներուն՝ 47 անձեր ստացած են բեկորային վնասուածքներ, 36ը ենթարկուած են ֆիզիքական բռնութեան, 5ին մօտ առկա եղած են այրուածքներ:

Քրէական գործի նախաքննութեան ընթացքին կարելի եղած է պարզել վնասուած կամ յափշտակուած լրագրողական սարքերուն նախնական ցանկը:



քրէական գործով արդէն հարցաքննուած են 74 քաղաքացիներ, 63ը նկատուած են տուժող, իսկ 11 անձեր հարցաքննուած են որպէս վկայ: Մնացած 25 անձերը յայտնաբերելու համար հետաքննութեան մարմիններուն տրուած են համապատասխան յանձնարարականներ:

Հարցաքննուած են նաեւ զանգուածային տարբեր լրատուամիջոցներու 23 լրագրողներէն 21ը, որոնց 19 հատը նկատուած է տուժող, 2ը հարցաքննուած է որպէս վկայ, իսկ 2ը

Այս գործողութիւններուն ընթացքին տարբեր յանցանք գործած ըլլալու, ինչպէս նաեւ լրագրողներուն մասնագիտական օրինական գործունէութիւնը խոչընդոտելուն համար նախաքննութեան այս փուլին քրէական հետապնդումի ենթակա են 6 անձեր, որոնցմէ 2ը կը մեղադրուին լրագրողներուն աշխատանքին արգելք ըլլալով: Վերջիններուն համար ընտրուած է անազատութեան մէջ պահելու չառնչուած խափանման միջոց:

### Տիգրան Մարտիրոսեան Պէտք է Վերադարձնէ Ողիմպիականի Մետալը



ԵՐԵՎԱՆ, «Երկիր Մեդիա».- Համաշխարհային խթանիչ ղեկերու գործաձուլութեան դէմ պայքարող ծառայութիւնը (WADA) վերստուգած է Պէյճիկի 29րդ ամառնային ողիմպիական խաղերուն մասնակցած, ծանրաբարձութեան մէջ Հայաստանի հաւաքականի անդամ Տիգրան Մարտիրոսեանի խթանիչ ղեկերու գործաձուլութեան պարագան, եւ բացայայտուած է, որ արդիւնքը դրական է: Այս մասին յայտնած է Միջազգային ողիմպիական կոմիտէի պաշտօնական կայքը:

69 քիլոկրամ ծանրութեան դասակարգին մէջ հանդէս եկած Տիգրան

Մարտիրոսեան Պէյճիկի խաղերուն դարձած էր պրոնզէ մետալակիր: Ողիմպիական ղեկերու գործաձուլութեան առնչուող քննութեանն ի յայտ եկած է, որ ան օգտագործած է «սխառագող» եւ «թուրինափոլ»:

Միջազգային ողիմպիական կոմիտէի ղեկոյցին մէջ նշուած է, որ Տիգրան Մարտիրոսեան խախտած է խթանիչ ղեկերու գործաձուլութեան վերաբերող կանոնները, ուստի որոշում տուած է որակազրկել զայն: Ըստ ղեկոյցին՝ որակազրկման ժամկէտին մասին վերջնական որոշում պիտի կայացնէ Մանրաբարձութեան միջազգային դաշնակցութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ

10 Արար Աշակերտներ Ուսում Պիտի Ստանան «Օրորա»ի Եւ Միջին Արեւելի Հիմնադրամի Միացեալ Նախաձեռնութեամբ

ԵՐԵՒԱՆ, «Արմէնփրէս».- «Օրորա» մարդասիրական նախաձեռնութեան եւ Միջին Արեւելի Հիմնադրամի միացեալ նախաձեռնութիւնը Հանդիսացող եւ 7 միլիոն տոլարի ֆոնտ ունեցող «Երաստագիտութեան կրթաթոշակ» ստացած 10 ուսանողներ՝ Սուրիայէն, Պաղեստինէն, Իսրայէլէն, Յորդանանէն, Լիբանանէն եւ պաղեստինեան տարածքներէն, Սեպտեմբերին պիտի սկսին իրենց ուսումնական միացեալ քոլեճներ (United World Colleges) ցանցի դպրոցներուն մէջ: Այս

Մրագիրի տեսողութեան ընթացքին Միջին Արեւելի երկիրներուն մէջ Հակամարտութիւններէ, տեղահանութիւններէ եւ աղքատութենէ տուժած 100 երեխաներու բացառիկ կարելիութիւն պիտի տրուի կրթութիւնը շարունակելու Աշխարհի միացեալ քոլեճներ միջազգային ցանցի դպրոցներուն մէջ: Մրագիրը Հիմնադրուած է իբրեւ երաստագիտութեան դրսեւորում Միջին Արեւելի ժողովուրդներուն, որոնք Հարիւր տարի առաջ՝ Հայոց Յեղասպանութեան տարիներուն, օթեան եւ

տեւելով երկամեայ միջազգային պակասութիւնը աստիճանի: Կրթաթոշակը կը տրուի այն ուսանողուհիին, որ լաւ արդիւնքներ ունի եւ Հետաքրքրուած է մարդու իրաւունքներով ու միջազգային Հիմնահարցերով: Կրթաթոշակը Հիմնուած է մարդու իրաւունքներու մի-

ջազգային պաշտպան Ամալ Քլունիի ի պատիւ՝ նպատակ ունենալով ամրապնդել միջնակութային կրթութիւնն ու փոխըմբռնումը: «Մենք հպարտ ենք, որ կարող ենք ուսում եւ միջազգային փորձառութեան Հնարաւորութիւն ընձեռնել (Շար. 18րդ էջ)



ուսանողները ընտրուած են իրենց ուսումնական բարձր յառաջդիմութեան հիման վրայ: Անոնք կամ գաղթական են, կամ տեղահանուած, կ'ապրին ծայրայեղ աղքատութեան պայմաններու մէջ կամ առանց ծնողքի (խնամակալի): Ուսանողներէն եօթն պիտի ուսանին Հայաստանի Դիլիջանի միջազգային քոլեճին մէջ, որ ուսանողներ ունի աշխարհի աւելի քան 60 երկիրներէ:

անունը տուին Հայ տարագրեալներուն: «Օրորա» մարդասիրական նախաձեռնութեան Համահիմնադիրները յայտարարած են նաեւ Ամալ Քլունիի անուն կրթաթոշակի շարունակութեան մասին: Արդէն երկրորդ տարին է, որ այս կրթաթոշակը կարելիութիւն կու տայ լիբանանցի ուսանողուհի մը անվճար ուսանելու Դիլիջանի միջազգային քոլեճին մէջ՝ Հե-



Մարմնամարզիկ Հուրի Գեբեշեանի Անունով Հնարք

ԵՐԵՒԱՆ, «Ազատութիւն».- Ողիմպիական 31րդ խաղերուն Հայաստանը ներկայացուցած կին մարմնամարզիկ Հուրի Գեբեշեանի կատարած նոր Հնարքը պաշտօնապէս կոչուած է անոր անունով: Այս մասին 31 Օգոստոսին Հաղորդած է Հայաստանի ազգային ողիմպիական կոմիտէն: Ռիօ տէ Ժեներոյի խաղերուն Հուրի Գեբեշեան նոր տարրը կատարեց զուգափայտերու վարժութեան ժամանակ՝ վարժութիւնը սկսելէ առաջ ընթացք առաւ առաջին ձողէն եւ 360 աստիճան դառնալով բռնուեցաւ միւսին: «Ամառային Օղիմպիական խաղերում պատմութեան մէջ առաջին անգամ Հայաստանի կին ներկայացուցիչ Հուրի Գեբեշեանը բազմամարտում Հաւաքեց 53,748 միւսոր եւ չկարողացաւ յաղթահարել որակաւորման փուլը», նշուած է կոմիտէի լրատուական Հաղորդագրութեան մէջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՀԱՆՍԵՎԱՆ ԵՄԲԼՈՐԵՍՅՈՒՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Ուրախութեամբ կը յայտենք թէ միութեան Հայ Հնտանեկան ԶՐԻ Ծարաթօրեայ վարժարանի դասերը Կլէմէնտի մէջ պիտի վերսկսին Ծարաթ, Սեպտեմբեր 17, 2016-էն սկսեալ:

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Բեռլինէ 3 օրերուն

Ծարաթ, Սեպտեմբեր 10, 2016  
Առաւօտեան ժամը 10-12

Ծարաթ, Սեպտեմբեր 17, 2016  
Առաւօտեան ժամը 10-12

Ծարաթ, Սեպտեմբեր 24, 2016  
Առաւօտեան ժամը 10-12

Հասցէն է՝ Incarnation Community Center  
214 West Fairview Avenue  
Glendale, CA 91202  
N. Central Ave.-ի և Glenoaks Blvd.-ի մօտերը

- Կ'ընդունինք 4-14 տարեկան փոքրիկներ
- Կը դասաւանդուին հայերէն լեզու, երգ, ասմունք եւ ազգային դաստիարակութիւն
- Դասի ժամերն են առաւօտեան 10-12

Սիրելի հայրենակիցներ, Ձեր սիրատուն զաւակներուն հայեցի դաստիարակութիւնը վստահեցէք միութեան ներկար տարիներու կրթական փորձառութիւն ունեցող մեր վարժարանին:

Մանրամասնութեան համար հետաձայնել՝

(562) 715-8730 • (818) 326-4725

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

EVERY SATURDAY AT THE VILLAGE

Jiro  
Armenian & International Singer

Maistro George

Samir Rizk  
Arabic Singer

FOR RESERVATION, PLEASE CALL THE VILLAGE  
626.256.6645  
1525 E. Huntington Dr., Duarte CA 91010

ՄԱՀԱՋԴ – ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՍԻԼՎԱ (ՊՕՂԻԿԵԱՆ) ԳԷՈՐԳԵԱՆ

Հանգուցեալ Սիլվա Պօղիկեան-Գէորգեանի մահուան Բ. տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Սեպտեմբեր 4, 2016ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, 500 S. Central Ave., յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝

Ամուսինը՝ Վրէժ Գէորգեան Մայրը՝ Սոնա Պօղիկեան Զաւակները՝ Արեգ եւ Սերոբ Սարգունի եւ զաւակները՝ Սագօ-Վէմ եւ Սանան-Սիլվա Շանթ եւ Բաթրինա Գէորգեան Եղբայրները՝ Աբօ եւ Անի Պօղիկեան եւ զաւակները՝ Շահան եւ Մհեր Արմէն Պօղիկեան Քոյրը՝ Անի եւ Հայկ Պաղտասարեան եւ զուտորը՝ Թալին Տազրը՝ Մովսէս եւ Վիթթորիա Գէորգեան եւ զաւակները՝ Նուպար, Հրանդ քհնյ. եւ Նայիրի իրենց ընտանիքներով Ները՝ Նեկտար եւ Գոգօ Քէչիչեան եւ զուտորերը՝ Զուարթ եւ Սեւան եւ զաւակը՝ Յովնան Հօրեղբայրներու զաւակները՝ Վարդան, Վահրամ, Աբօ, Արտաշ, Փօլ, Պօղոս, Վազգէն եւ Աբգար իրենց ընտանիքներով Հօրեղբայրներու զուտորերը՝ Շաքէ, Մատլէն, Անահիտ, Սեդա, Սօսի, Սոնա, Ռոզիկ իրենց ընտանիքներով Վօրեղբայրը՝ Աբրահամ եւ Մաղիկ Յովսէփեաններ եւ զաւակները՝ Մակի, Արա եւ Ռազմիկ իրենց ընտանիքներով Վօրեղբայրը՝ Զօհրապ եւ Էլիզ Յովսէփեան եւ զաւակները՝ Կարին, Մամբրէ եւ Մարալ իրենց ընտանիքներով Վօրաքոյրը՝ Լուսին եւ Վահան Վարդանեան եւ զաւակները՝ Արա եւ Վահան իրենց ընտանիքներով եւ Համայն Գէորգեան, Պօղիկեան, Յովսէփեան, Վարդանեան, Սարգունի, Պարմաքեան, Սարգիսեան, Պօյաճեան, Պաղտասարեան, Պուրսալեան, Մանճեան, Փանոսեան, Գասամանեան, Քէչիչեան, Բաբիսեան եւ Լաքիսեան ընտանիքներն ու Հարազատները:



ՄԱՀԱՋԴ

ԶԱՊԷԼ ՆՈՒԲԱՐԵԱՆ

(Ծնեալ՝ Դեկտ. 3, 1934ին)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝ Զապէլ Նուբարեանի մահը, որ պատահեցաւ Զորքըշաբթի, Օգոստոս 24, 2016ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Սեպտեմբեր 2, 2016, առաւօտեան ժամը 9:30ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Church of the Hills մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝

Զաւակը՝ Օշին եւ Ռոզէթ Նուբարեան եւ զուտորերը՝ Մանան եւ Նինար Զաւակը՝ Ամուր եւ Լօրեթա Նուբարենց եւ զաւակները՝ Լալագէ, Մրրիկ եւ Վեմ Եղբայրը՝ Ռուբէն եւ Էմմա Մկրտիչեան եւ զաւակները՝ Շահէն եւ Քարէն Եղբայրը՝ Ռաֆայէլ եւ Սեդա Մկրտիչեան եւ զաւակը՝ Յովսէփ եւ Համայն Հարազատներն ու բարեկամները:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ

Հանգուցեալ գրագէտ եւ մանկավարժ Պետրոս Հաճեանի մահուան 4րդ տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Սեպտեմբեր 4, 2016ին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ մէջ, 5300 White Oak Ave., յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝

Կինը՝ Սօսի Հաճեան Զաւակները՝ Աւետիս, Արագ, Ալինա, Արի, Ալեքս եւ Անիա Քոյրը՝ Լուսին Աչճեան Քրոջ զաւակը՝ Ճորճ Աչճեան Քոյրը՝ Էօթենի Տէտէեան Քրոջ զաւակը՝ Աւօ Տէտէեան Ստեփան Արսլանեան եւ ընտանիք Կարօ Արսլանեան եւ ընտանիք Արմէն Արսլանեան եւ ընտանիք Յակոբ Կիլլիւճեան եւ ընտանիք Վարդան Մաթեոսեան եւ ընտանիք Մհեր Պապեան Հալէպի Ազգային Քարէն Եփփէ ձեմարանականներու Լոս Անճելըսի ընկերակցութիւն Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ «Տիգրանեան» սրահին մէջ:




Advertisement for Abbott & Hast Funeral Directors. Text includes: 'In case of a death in your family Before You Do Anything Call Hakop Boyadjian Srpuı Boyadjian FD 1773 818-765-3737 Armenian Cell: 323-855-9558 Office: 323-661-1111' and 'Transport to Armenia, Iran, Lebanon etc... Establishment Lic. # 1399'.

Արցախի 25ամեակի Համեստ Ուրովանդակալից Նախաձեռնութիւններ

(Շար. 14րդ էջէն) խորագիրով ցուցահանդէսին: 1 Սեպտեմբերին դպրոցներուն մէջ կը դասաւանդուին «Լեռնային Ղարաբաղը 25 տարեկան է» խորագիրով նիւթեր: Նոյն օրը նախատեսուած է պետական պարզեւներու յանձնման արարողութիւնը, հանրապետութեան նախագահի ընդունելութիւնը: Ստեփանակերտի տարբեր հրապարակներու վրայ տեղի պիտի ունենան մարզամշակութային նախաձեռնութիւններ, որոնք պիտի տեւեն մինչեւ յաջորդ օրը: Վերածնունդի հրապարակէն 2 Սեպտեմբերին ընթացք պիտի առնէ յիշատակի, խոնարհումի եւ հպարտութեան երթը՝ դէպի Ստեփանակերտի յուշահամալիր: Արցախի Հանրապետութեան 25ամեակին առիթով Հայաստանի Կեդրոնական դրամատունը Ստեփանակերտի մէջ բացումը պիտի կատարէ «Հայաստանի դրամաշրջանառութեան պատմութիւնը» խորագիրով ցուցահանդէսին: Շուշիի մէջ պիտի կայանայ ուսանողական հանրակացարանային Համալիրի բացման արարողութիւնը: Ստեփանակերտի մէջ երեկոյեան տեղի պիտի ունենայ տօնական համերգ եւ հրավառութիւն: Տօնական եօթեայ ծրագիրին հիմնական իրադարձութիւններէն մէկը պիտի ըլլայ Քաջաթաղի շրջանի Աղաւնոյ գիւղին մէջ Առիւծական նոր թաղամասի բացման արարողութիւնը: Արդէն իսկ Ստեփանակերտ սկսած են ուղղուելու արտասահմանցի հիւրերը, քաղաքական նշանաւոր գործիչներ, հասարակական շարժումներու անդամներ, որոնք այս կամ այն ձևով աջակցած են Արցախի ազատագրական պայքարին: Նախատեսուած է նաեւ հանդիպում աշխարհահռչակ գրող Քրիստ Պոճճալեանի հետ:





### Քարվանձառի Մէջ Ջրամատակարարումը Վերսկսած է

ԵՐԵՎԱՆ, «Հետք».- «Հետք»ի լրագրող Գիանա Ղազարեանին հետ ունեցած զրոյցին ընթացքին Լեոնային Ղարաբաղի Քաղաքաշինութեան նախարարութեան ջրամատակարարման գծով փոխնախարար Գէորգի Հայրեան յայտնած է, որ 31 Օգոստոսի գիշերը վերսկսած է Քարվանձառի ջրամատակարարումը: Վերանորոգուած են ստորերկրեայ խողովակները»: Յիշեցնենք, որ 16 օրէ ի վեր Քարվանձառի մէջ ըմպելի եւ գործածելի ջուր չկար:

**Ձեր Առեւտրական  
Ծանուցումները  
Տուէք  
«Ասպարէզ»ին**



**Երջագայութիւն Հայաստանով եւ Արցախով**  
Tours Around Armenia And Karabakh  
Туры По Армениа И Нагорному Карабаху

**+ 374 55 107040**  
**+ 374 77 617188**

marshaktours@gmail.com  
Tours with Arshak

# CLASSIFIED

## JOBS

**PROFESSIONAL BODYMEN WANTED**  
- For Auto Collision centers in Hollywood & Granada Hills. Must have own tools. Starting \$5000/mo. (per qualification). Call Vera 323-465-2100.

**PLUMBERS & ELECTRICIANS WANTED** - Min 3YR Experience req'd. Must Speak English. IMMEDIATE HIRING! 818-767-0303 (Call 9am-4pm).

**ՍԱՆ ՎԵԼԻԻ ՄԷՋ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻՆՔ** - Թոշնապահութեան մէջ փորձառու գործաւորի եւ փորձառու պարտիզպանի. 818-767-0303.

**FURNITURE WORK** - Կլինտէյլի մէջ կահոյքի ընկերութիւն մը կարիքը ունի փորձառու ձեւողի/cutter, կարողի եւ կահոյքի վարպետ երեսպատողի/apholsterer. P/T-F/T 818-625-6678/818-241-2021.

**CHAIN SOLDERING** - Experienced Jewelry Chain Soldering Employees wanted in Downtown Los Angeles. CALL 213-268-5886.

**GLENDALE COLLISION CTR** - Կարիքը ունինք bodyman-ի եւ bodyman-ի օգնականի, ինքն-ի ներկարարի փորձառու օգնականի, Bodyshop-ի վարպետ գործաւորի եւ ինքն-ի վարորդի. 818-546-8809 ext 4.

**WAREHOUSE ADMINISTRATOR WANTED** - For an E-Commerce/Online Sales co. in Altadena/Pasadena. Immediate Hiring. F/T. Duties: Order processing/Fulfillment & Inventory Control. Computer Literacy & Fluent English a MUST! Call 818-797-4318 or E-Resume: info@247comfortapparel.com

## RENT-RESIDENTIAL

### GLENDALE

**2BD/2.5BA TOWNHOUSE** - 420 W Garfield. 100% վերանորոգուած, 2 պատշգամ, փայտէ յատակ, 2 ինքն-ի կանգառ, ապահով շէնք. W/D hook-up. Սազօ՝ 818-729-9999.

**1163-1167 JUSTIN AVE, GLENDALE** - 3bd/2ba Apts: 1100sf. Upper units. Laminate/Carpet flrs. Ctr.A/H. D/W. Lndry Facility. 2 Prkg each. NO Pets. \$2475/mo. Silva 818-484-5598.

**3BD/1.5BA HOUSE** - 901 E Palmer. Wood flooring. Upgraded kitchen cabinets/New Granite c-t. NO A/C. \$2300/mo. NO Section 8. Call Marina 818-427-9394 (8am-4pm).

### NORTH HOLLYWOOD

**2BD/2BA APT** - Laurel Cyn/Agnes. Ամբողջովին վերանորոգուած, առաջին յարկ, Ctr.A/H, փայտէ յատակ, հայաբնակ մաքուր շէնք, 2 ինքն-ի կանգառ. \$1550/mo. 818-360-9385/818-395-9588.

### VALLEY GLEN

**1BD/1BA ՆՈՐ BACKHOUSE** - Fulton/Vanowen, փայտէ յատակ, A/C, սառն., փուռ, washer/dryer, անձն. բակ. \$1500/mo. utility-ները ներառեալ. 1-2 անձի համար. NO SEC 8. Մատչէն՝ 818-579-3147.

### TUJUNGA

**2BD/2BA FRONT HOUSE W/DEN** - 100% վերանորոգուած, Ctr.A/H, նոր խոհանոց/appls, նոր փայտէ յատակ, washer/dryer, անձնական driveway/կարած, հանդարտ թաղ. \$2350/mo. Օշին՝ 818-426-2006.

### NORTHRIDGE

**3BD/2.5BA TOWNHOUSE** - 17221 Roscoe Blvd. 100% վերանորոգուած, նոր փայտէ յատակ, washer/dryer, 2 ինքն-ի կանգառ. \$2450/mo. Amalia՝ 818-281-8407.

### GRANADA HILLS

**5BD/2.5BA BEAUTIFUL HOUSE W/ POOL** - Wood flooring. Large backyard. Great School Zone. \$4150/mo.+ Deposit. Call Donna 818-414-6354.

**NOTICE**

At no time shall The Armenian Media Network & its subsidiary, Asbarez, be held liable for any consequential damages caused by the content of any advertisement. Armenian Media Network & Asbarez reserve the right to deny service.

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

«Ասպարէզ» որեւէ ժամանակ կամ որեւէ ձեւով պարտասխանաբար չէ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան: «Ասպարէզ» իրաւունք ունի մերժելու որեւէ ծանուցում:

**Ցանկագրուած Ծանուցումներու (Classified) Սակ 6 Յաջորդական Թիւեր \$60 (200 տառ եւ թիւ) Գեռածայն (323) 284-9222**

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ – CLASSIFIED ADS

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

CLASSIFIED

RESEDA

BEAUTIFUL 3BD/2BA HOUSE W/POOL - Close to CSUN/Northridge Hospital. Upgraded kitchen, plumbing & appls. Great front & back yards. \$3000/mo. Call John 818-434-4018.

SALE BUSINESS

ԾԱՆՈՒ NAIL SALON - N. Hollywood, shopping ctr.ի մէջ, 2600sf, 12 spa chair/12 manicure station, 2 facial/2 massage/2 wax room. Մուտք՝ \$750K/Շահ՝ \$150K/Վարձք՝ \$9K. Գին՝ \$390K. Call 818-620-1446.

SALE RESIDENTIAL

MONTROSE - 3BD/3BA Remodeled TownHouse; 1700sf; Frpl; Balcony; Pool; \$599K. NORTH HOLLYWOOD - Income Property! 3 Houses on 1 Lot; 2(3+1) + 1 Single; \$659K. CALL 818-726-8014 (CalBRE #01869264).

MISCELLANEOUS

ԾԱՆՈՒ ՀՈՂԱՇԵՐՏ - BURIAL PLOT FOR SALE - Forest Lawn Hollywood Hills, Loving Kindness Space #2. Call for details 818-357-1606.

Փութին էրտողանին 7 Պայման Առաջադրված է, Մէկը՝ Արցախին Առնչուող

(Շար. 2րդ էջէն) այս հարցին մէջ դասակարգումներն արդարեւեւ չեն: Այս խնդիրը լուծման կարիք ունի: Մեզի հակառակելով՝ խնդիրը լուծելու փոխարէն աւելի՛ կը բարդացնէք: 3. Նրբի հարցով կը պաշտպանէք մեզի դէմ իրականացուող քայլերը: Նոյնը կ'ընէք կովկասի որոշ երկիրներու մէջ: Սխալ է: Նման քայլեր կը խոչընդոտեն յարաբերութիւններուն բնականացումը: 4. Մենք գիտենք, որ ձեր գործակալները կեղծական Ասիոյ մէջ աշխատանքներ կ'իրականացնեն՝ փորձելով տարածաշրջանի ժողովուրդները մեզի դէմ լարել: Վերջ տուէ՛ք այս ընթացքին: 5. Մինչ Սուրիոյ մէջ միակ վտանգը «Իսլամական պետութիւն» ահաբեկչական կազմակերպութիւնն է, դուք ուշադրութիւն կը հրաւիրէք Սուրիոյ քրտական ժողովրդավարական միութիւն կուսակցութեան վրայ: Այս կուսակցութիւնը մեզի համար ալ կարեւոր է: Որեւէ քայլ մի՛ առնէք, հակառակ պարագային՝ տարածաշրջանը անցանկալի իրադարձութիւններու թատերաբեմ կ'ընայ դառնալ: 6. Վերջ տուէ՛ք դէպի Սուրիա զէնք եւ զինամթերք ուղարկելուն: Ձեր սահմանները բաց են ահաբեկչական կառույցներու եւ Ռուսիոյ շահերուն դէմ հանդէս եկողներու առջև: 7. Շարք մը թուրք նախարարներու եւ պաշտօնատարներու հակառուսական յայտարարութիւնները մեզ չափազանց կ'անհանգստացնեն: Յատկապէս օդանաւի զգեստներուն հետ կատարուած որոշ յայտարարութիւններ չեն մոռցուած: Կը խնդրեմ, որ այսուհետեւ աւելի զուսպ ըլլան անոնք:

Միջին Արեւելքի արժանի աշակերտներին, քանի որ Միջին Արեւելքը ժամանակին դարձել է նաեւ մեծ թուով հայերի տունը», յայտնած է «Օրորա» մարդասիրական նախաձեռնութեան համահիմնադիր Ռուբէն Վարդանեան: «Աշխարհի տարբեր կողմերից երիտասարդներին համախմբելով՝ մենք փորձում ենք նրանց մօտ վաղ տարիքից միջազգային երկխօսութեան ու փոխըմբռնման մշակույթ ստեղծել, երբ նոր-նոր են ձեւաւորում փոխյարաբերութիւնները եւ մարդու արժեքային համակարգը: Յոյսով ենք, այսպիսով մենք նրանց դրդում ենք փոխըմբռնման, միմեանց հասկանալու՝ նոյնիսկ դժուարին պահերին»,

10 Արար Աշակերտներ Ռուսմ Պիտի Ստանան «Օրորա»ի եւ Միջին Արեւելքի Հիմնադրամի Նախաձեռնութեամբ

Ամալ Բլուրնի կրթաթոշակառու ընտրուած է աւելի քան 43 հոգինոց վերջնական ցանկէն, յատկապէս նկատի առնուած է անոր բացառիկ յառաջադիմութիւնը, լաւատեսութիւնն ու ընկերային պատասխանատուութիւնը, զորս ան կը ծրագրէ լաւագոյն ձեւով դրսեւորել իրաւաբանական ուսման տարիներուն: «Հպարտ ենք, որ կարող ենք աջակցել զայլք սերնդի կին առաջնորդների կայացմանը: Մենք անչափ ուրախ ենք այն հնարաւորութիւնների համար, որ այս կրթաթոշակը տալիս է Լիբանանի եւ տարածաշրջանի միւս երկրների ուսանողուհիների առջև», ըսած է Ռուբէն Վարդանեան:

Ամալ Բլուրնի կրթաթոշակառու ընտրուած է աւելի քան 43 հոգինոց վերջնական ցանկէն, յատկապէս նկատի առնուած է անոր բացառիկ յառաջադիմութիւնը, լաւատեսութիւնն ու ընկերային պատասխանատուութիւնը, զորս ան կը ծրագրէ լաւագոյն ձեւով դրսեւորել իրաւաբանական ուսման տարիներուն: «Հպարտ ենք, որ կարող ենք աջակցել զայլք սերնդի կին առաջնորդների կայացմանը: Մենք անչափ ուրախ ենք այն հնարաւորութիւնների համար, որ այս կրթաթոշակը տալիս է Լիբանանի եւ տարածաշրջանի միւս երկրների ուսանողուհիների առջև», ըսած է Ռուբէն Վարդանեան:

Օգնեցեք ՀՕՍին Բարեփոխելու Կարօտելի Մը Կեանքը Նուիրեցեք «Սիրտը Սիրտ» հիմնադրամին Armenian Relief Society of Western U.S.A. Heart to Heart Fund 517 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202-2812 Email: office@ARSwestUSA.org Phone: (818) 500-1343 The Armenian Relief Society of Western USA, Inc. is a 501(c)(3) non-profit organization

4 ԵՒ 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Փառասուն՝ նուիրուած Մուսա Լեւոյի հերոսամարտի 101ամեակին: Կազմ. Մուսա Լեւոյի միութեան, Ֆրեզնո: Վայր՝ Fresno County Peach Officer's Training Grounds, 7633 N. Weber Ave., Fresno, CA 93722: Շաբաթ, երեկ, ժամը 7էն սկսեալ, հարիսայի պատրաստութիւն եւ աւանդական տաւուլ-զուռնայ: Կիրակի, ժամը 10:30ին, Ս. Պատարագ եւ մատաղօրհնէք: Պիտի պատարագէ Վահան Ա. քննչ. Կոստանեան պատգամաբեր՝ Կարօ Ստամպուլեան: Տեղեկութիւններու համար՝ ձոր՝ 559-577-3320 կամ Մարտիկ 559-704-1672:

25 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Կիրակի: Հայ Ամերիկեան Հայաստանի ծնողազուրկ Հաշմանդամ կարիքաւոր երեխաներու ֆոնտի տարեկան 17րդ Telethon: Համագործակցութեամբ «Քաջ Նազար» հանդէսի նոյնանուն կիրակնօրեայ show-ի: Հասոյթը պիտի տրամադրուի Գիւմրիի «Լապտերիկ» եւ սահմանամերձ «Արեւիկ» մանկապարտեզներու հիմնովին վերաշինութեան: Հեռ. 818-239-6880, 818-246-2070, 818-818-9009: Հասցէ՝ 626 W. Colorado St., Glendale, forourkids99@gmail.com, www.forourkids99.com:

20-29 ՅՈՒՆԻՈՒՍ 2017

Armenian Heritage-ի 20րդ նաւային շրջապտոյտ դէպի Western Caribbean կղզիներ, Royal Caribbean-ի նաւով: Այցելութիւն՝ Aruba, Curacao, Bonaire եւ Labadec: Սակ՝ \$949 (մէկ անձի, port & ACAA registration fee ներառեալ) + government tax: Հայկ. մշակ. ձեռնարկներ, մրցումներ, տեսերիկներ: Travelgroup International, 561-447-0750 կամ Gail 866-447-0750, ext 108, email AHC@travelgroupint.com:

ԺՈՂՈՎՆԵՐ

ՀՅԴ «ԴԻՐՕ» կոմիտէութեան ընկերական հերթական ժողովը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Սեպտեմբեր 8ին, երեկոյեան ժամը 8ին:

ՀՅԴ «ՌՈՍՏՈՄ» կոմիտէութեան ընկերական հերթական ժողովը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Սեպտեմբեր 15ին, երեկոյեան ժամը 8:30ին:

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԳՐԱՏՈՒՆ Հայկական Մշակոյթի Կեդրոն Կլեմտէյլի Սրտին Մէջ Դասցէ՝ 225 S. Glendale Ave., Glendale 818 500 0790 Email: Books@sardarabad.org Website: www.Sardarabad.com

Asbarez ARMENIAN DAILY NEWSPAPER Subscription Gift Name/Անուն Address/Դասցէ Phone/Դեռածայն Եթէ կ'ուզէք բաժանորդագրուիլ եւ կամ Ասպարէզ նուիրել ձեր բարեկամներուն տարեկան միայն \$100-ով, կը խնդրենք որ հեռածայնէք 323-284-9222 քիւի:

CALIFORNIA STATE LOTTERY ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ MEGA MILLION DRAW RESULTS «ՄԵԿԱ ՄԻԼԻՈՆ»Ի ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ Mega ԵՐԵՔՇԱԲԱԹԻ 8/30/2016 28 32 41 51 71 11 SUPER LOTTO DRAW RESULTS «ՍՈՒՓԸՐ ԼՕԹՕ»Ի ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ Mega ՀԱԲԱԹ 8/27/2016 20 25 37 44 45 27 ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ 8/24/2015 2 9 40 44 46 25 ՀԱԲԱԹ 8/20/2016 10 18 27 39 41 4 ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ 8/17/2016 22 31 36 46 47 18

ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ

Ոսկե Արծիւը

ԳԱՅԻԱՆԷ ՊՕՂՈՍԵԱՆ, մայր

Սա ձեր լսարանն է: Դասընկերներդ, դասախօսներդ վարանոտ մտնում են ներս ու կողք-կողքի նստում երկարուկ սեղանի երկու կողմերում: «Մեր տեղերը նստենք», - ցածրաձայն ասում է Շուշանը: Գարեգին Յարութիւնեանը սովորականի պէս իր տեղում է՝ ծայրին, ուսուցչի սեղանի մօտ, յետոյ Լուսինէն է, յետոյ՝ Շուշանը: Աշոտը Շուշանի կողքին չի նստում: Շուշանի կողքի աթոռը դատարկ է: Աշոտը նստում է ազատ աթոռի կողքին: Կարիք չկայ, որ նա բռնեցիկ ասի. նրա աչքերի մուգ տխրութիւնն այնքան խօսուն է դատարկ աթոռին նայելիս:

Յանկա... անկախ իմ կամքից, ոտքերս ինձ առաջ են տանում: Ես չեմ ուզում, որ քո տեղը դատարկ մնայ: Ընկերներիդ հրճեցի՞ր: Ես հասնում-տեղաւորում եմ քո աթոռին: Բոլորն ինձ են նայում՝ որը ներդաւիտ ժպիտով, որը տարակուսած... Իսկ Լուսինէի ակնոցի անգոյն ապակու տակից արցունքը սահում է ներքեւ:

- Նա էլ երբեք չի նստի այդ աթոռին, - ասում է կիսաձայն:

Ես երեւի ուրիշ տեղ պիտի նստէի: Այդ աթոռը պիտի ազատ մնար, որպէսզի հաւաքուածներից իւրաքանչիւրը իր հոգու մէջ, իր մտապատկերում գտնէր քեզ՝ գոյն առ գոյն, յոյզ առ յոյզ, դրուագ առ դրուագ... ու բերեր նստեցնէր այդ աթոռին: Ու լսարանը լցուէր քո կապոյտ աչքերի արեւով, քո զրնգուն ծիծաղի ելեւէջներով...

- Ռոբերտն իմ ընկերն էր, - դասախօսիդ ձայնը սարսուղու աստիճանի ցաւոտ է: - Նա կարող էր իմ որդին լինել, բայց մենք ընկերութիւն էինք անում, որովհետեւ Ռոբերտը 18 տարեկանում արդէն հասուն տղամարդ էր՝ պինդ, յուսալի, պատասխանատու: Ես ամէն օր նրան իմ մեքենայով դասի էի բերում, իսկ դասերից յետոյ տուն էի տանում: Իսկակերոջ ընկերոջ նման: Եթէ ինձ ասէին՝ մէկ նախադասութեամբ նկարագրիր Ռոբերտին, ես կ'ասէի՝ նա աշխարհ էր եկել մարդկանց օգնելու համար: Ու այդ մղումը երբեմն հասնում էր ծայրայեղութեան: Մարդկանց հոգսը իր վրայ վերցնելու, ուրիշների ցաւով ապրելու, ուրիշների համար իրեն պատեպատ տալու ցանկութիւնը նրա օրը լցնում էր անթիւ-անհամար պարտականութիւններով: Ռոբերտը գործունեայ էր, հնարամիտ, ճարպիկ: Երբ ես իմացայ, որ Ռոբերտից լուր չկայ, համոզուած էի, որ նա ողջ է, քանի որ, եթէ նա ողջ լինէր, մի հնար կը գտնէր տուն դանգելու:

- Նա մեծ սիրտ ունէր, - Աշոտն է, կողքիս է նստել, ու կարող եմ մօտիկից տեսնել ընկերոջը կորցրած երիտասարդ տղայի աչքերը: Սեղանին դրուած ձեռքը դողում է: Երբեք այսքան արցունքոտ ժպիտ չեմ տեսել:

- Նեղութեան պահին պէտք չէր, որ Ռոբերտից օգնութիւն խնդրէիր, ինքը կը գար ու մինչեւ վերջ կը կանգնէր կողքիդ: Այնքան եռանդ, ուրախութիւն, կեանք կար Ռոբերտի մէջ: Այնքան սէր ու բարութիւն: Ուղղակի չես հաւատում, որ նա այլեւս չկայ: Իսկ նրա հարիւրաւոր երազանքները, մենք արդէն իրենց տանը մեր փոքրիկ ատամնաբուժարանն էինք հիմ-

նել...

Գիտէք, նա սիրում էր նկարուել: Գեղեցիկ տղայ էր, ու աղջիկները պաշտում էին նրան: Մագնիսի պէս ձգում էր բոլորին: Աղջիկները նրա շուրջն էին հաւաքուած դէպի լոյսը վազող թիթեռների պէս... Ու միայն նրա գեղեցկութիւնը չէր պատճառը, այլ ամուր, յուսալի, ազնիւ ու պայծառ խառնուածքը:

Կողքիս նստած աղջիկը շիկնում է: Ես պարզ տեսնում եմ, որ նա չիկնում է ու փախցնում հայեացքը: Թուխ, սիրունիկ աղջիկ է, փայլուն, արտայայտիչ աչքերով:

- Սիրած աղջիկ ունէ՞ր, - հարցնում եմ Աշոտին՝ աչքս Շուշանից չկտրելով: Աշոտը չի պատասխանում, իսկ Լուսինէն արցունքը սրբելով՝ գլխով ցոյց է տալիս թխահեր գեղեցկուհուն:

- Շուշանին էր սիրում:

Երբ Լուսինէն խօսում է քո մասին, անպայման ծիծաղում է արցունքների միջից:

- Անհնար է յիշել Ռոբերտի մեծ, լուսաւոր աչքերն ու չժպտալ:

- Ընկերութիւն էք արել, - հարցնում եմ Շուշանին: Աղջիկը չի պատասխանում, լացը զսպելու ճիգից ուսերը ցնցում են: Նրա փոխարէն Լուսինէն է պատասխանում:

- Մենք շատ մտերիմ էինք, յաճախ էինք խօսում հեռախօսով, երբ բանակում էր: Միշտ հարցնում էր Շուշանից: Մի օր էլ խաբեցի, թէ Շուշանն ընկեր ունի: Ոնց էր յուզուել: Մէկ շաբաթ ամէն օր դանգեց ու հարցրեց՝ ճիշդ եմ ասո՞ւմ, թէ խաբում եմ: Երբ խոստովանեցի, որ կատակ եմ արել, թեթեւացած շունչ քաշեց ու ասաց՝ Շուշանն ինձ է սպասում, չի կարող ընկեր ունենալ:

Ռոբերտին բոլորն էին սիրում: Նա այնքան բարի էր: Շատ էր սիրում փոքրիկ երեխաներին: Կենդանիներ էր սիրում, թուլակ ունէր, շուն, կատու... Որտեղ Ռոբերտն էր, այնտեղ ծիծաղ ու ուրախութիւն կար: Գիտէք, նա Ռուսաստանի քաղաքացի էր ու կարող էր չձառայել, բայց կամաւոր գնաց բանակ...:

- Ինձ առանց «Չան» չէր դիմում: Գուռս բացում էր ու ասում՝ ընկեր Իգիթեան Չան, ո՞նց էք, ինչո՞վ օգնեմ:

Ընկեր Իգիթեանը բաժնի վարիչն է ու այսպէս է յիշում Ռոբերտին. «Նրա բերանից «օգնել» բառը անպակաս էր, կա՛մ ասում էր՝ ինչով օգնեմ ձեզ, կամ էլ՝ ոնց օգնենք մեր ընկերոջը: Գալիս էր, խնդրում ուրիշների համար:

- Մի անգամ ինձ ասաց՝ ուզում եմ հօրս պէս հերոս լինել: Ռոբերտի հայրը ուրիշներին փրկելիս այրուել էր ու դէմքին սպի ունի, - յիշում է Գարեգին Յարութիւնեանը: - Նա արծիւ էր, որն ուզում էր աւելի ու աւելի բարձր թռչել: Երբ Ռոբերտին «Ոսկէ արծիւ» չքանչանով պարգեւատրեցին, մտածեցի, որ դա նրան բնութագրող ամենադիպուկ պարգեւն է: Ինքն էլ մի ոսկէ արծիւ էր...

- Մեր կեանքից մեծ լոյս պակասեց, - ասում է Լուսինէն, - բոլորիս կեանքից:

...Յետոյ մէկը միւսին լրացնելով՝ խօսում են դասախօսներդ, պատմում են, յիշում՝ Նունէ Մեծիւմեանը, Կարինէ Օհանեանը, Լաուրա Գազդուրջեանը, Ռուզաննա Ամարեանը... Յիշում են, թէ որքան գեղեցիկ էիր զինուորական համազգեստի մէջ, երբ արձակուր-



դի էիր եկել, թէ ինչպէս ասացիր՝ հանգիստ քնէք, ես սահմանին եմ:

Էլ ոչ ոք չի լալիս: Թուում է՝ դու ներս ես մտել, նստել ես մեր կողքին: Այնպէս, ինչպէս դու ես երազել քո կարճատեւ կեանքում՝ փառքով ու հերոսավայել: Ես այլեւս գրի չեմ առնում բառերը, որով «օծում» են քեզ՝ կարեկից, ուժեղ, վճռական, բարի, լուսաւոր, պատուախնդիր... Ես մտածում եմ ծնողներիդ հետ մեր հանդիպման մասին ու նրանց մխիթարելու բառեր չեմ որոնում:

- Ես հպարտ եմ, որ Ռոբերտի ընկերն եմ եղել:

- Ես հպարտ եմ, որ դաս եմ տուել Ռոբերտին:

- Ես հպարտ եմ, որ ճանաչել եմ նրան:

Լսո՞ւմ ես: Դու սա՞ չէր երազում, այս փառքը, այս արծուային թռիչքը: Դէ, վայելի՛ր լիուլի...  
\*\*\*

Ես հաւատում եմ հոգու անմահութեանը: Ես վստահ եմ, որ մենք բոլորս հատուցելու ենք կամ վարձատրուելու մեր ապրած իւրաքանչիւր րոպէի, մեր լաւ ու վատ գործերի համար ե՛ւ երկրային կեանքում, ե՛ւ երկնային յաւերժութեան մէջ: Ես վստահ եմ, որ դու մեզ հետ ես, դուրը բացում, ինձ հետ մտնում ես ներս, տեսնում ես մօրը աչքերի բաց-կապոյտ տխրութիւնը, լսում ես հօրը զսպուած հատաչք, ձեռքը դնում ես պապիդ ուսին հին օրերի նման, կրծքիդ ես սեղմում փոքրիկ եղբօրդ: Յետոյ ինձ հետ թերթում ես սեղանին թափուած հարիւրաւոր լուսանկարները ու վերջիչում:

...Այստեղ ոչ ոք անցեալ ժամանակով չի խօսում քո մասին, ոչ ոք չի պատմում, թէ ինչ եղաւ Ապրիլի 1-ի լոյս 2-ի գիշերը... Ոչ ոք չի յիշում, թէ ինչպէս ես գումարտակի հրամանատարին ասել՝ բոլորը զոհուել են, մնացել եմ ես ու մի



նունակ: Դիրքը չյանձնէք թուրքին: Թէ ինչպէս ես մինչեւ վերջին փամփուռը կրակել, ու երբ հասկացել ես, որ օգնութեան շտապող ծառայակիցներդ չեն հասցնելու փրկել կեանքդ, սպասել ես՝ աղբբեջանցի զինուորները մօտենան, շատ մօտենան... ու պայթեցրել ես նունակը՝ վերջին պահին, մեռնելուց առաջ խլելով քեզ շրջապատած ազերիների կեանքը: Ոչ ոք չի խօսում քո շնորհիւ ողջ մնացած զինուորի մասին, որին տեղաւորել ես թաքստոցում եւ վերադառնալով շարունակել կոիւղ՝ քեզ վստահութեամբ զիրքը պաշտպանելու համար: Քո հարազատները անցեալում են ապրում, որտեղ դու ողջ ես, որտեղ երեք տարեկանից խանութ ես գնում հարեւաններիդ համար, որտեղ քո՝ երկուսից եօթանասուն տարեկան ընկերներն են՝ իրենց անվերջանալի յիշողութիւններով, որտեղ քո կատակներն են... քո ապրած կեանքը:

...Կողքից նայողը կը մտածի՝ գժուել ենք: Մենք ծիծաղում ենք: Քո մասին ենք խօսում ու ծիծաղում ենք: Ծաղիկների միջից քո նկարն էլ է ծիծաղում մեզ հետ: ...Ու մի պահ թուում է, թէ մենք էլ ենք արծիւ ու թռչում ենք...

*You think you know the story but  
you've never heard it told like this*

**ARMENIANS OF COLORADO**  
P R E S E N T S



*A story of love and survival born out of the Armenian Genocide*

Emmy® award winning composer Denise Gentilini  
and internationally celebrated singer/songwriter Lisa Nemzo  
bring their original production from Denver to Glendale for an exclusive showing  
Produced by Well Orchestrated Madness  
Directed by Christy Montour-Larson

two shows only  
**Saturday September 10th, 7:30pm**  
**Sunday September 11th, 3:00pm**  
tickets: [www.Alextheatre.org](http://www.Alextheatre.org)

VISIT: [IAMLIVETHEMUSICAL.COM](http://IAMLIVETHEMUSICAL.COM) FOR MORE INFORMATION

Proud Partner Organizations:



Armenians  
of Colorado  
Fiscal Sponsor



Mashdots College



UCLA.org



ANCA-WR



**ALEX THEATRE**  
PERFORMING ARTS & ENTERTAINMENT CENTER

TICKETS AVAILABLE THROUGH [ALEXTHEATRE.ORG](http://ALEXTHEATRE.ORG), BY PHONE AT 818.243.ALEX (2539)  
OR IN PERSON AT THE ALEX THEATRE BOX OFFICE, AT THE AMERICANA AT BRAND  
CONCIERGE DESK AND AT GLENDALE COMMUNITY COLLEGE AUDITORIUM BOX OFFICE